# ԲԱՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ ՔԼՄ-ՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նորացված հրատարակություն

2016

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՍՏԱՆ»
http://transparency.ge

Ձեռնարկի պատրաստումը հնարավոր դարձավ ամերիկացի ժողովրդի աջակցությամբ, USAID-ի օգնությամբ: Փաստաթղթի բովանդակությունն ու նրանում արտահայտած կարծիքները պատկանում են «Միջազգային թափանցիկություն՝ Վրաստանին» և չի արտահայտում Ամերիկայի իշխանության, USAID-ի կամ IREX-ի դիրքորոշումը:

# Բովանդակություն

**Ներածություն** ........ Error! Bookmark not defined.

**Պետակա գնումների էլեկտրոնային հարթակ → tenders.procurement.gov.ge** ........ **6**

**Ընկերությունների սեփականությունը** ........ Error! Bookmark not defined.

Հանրային ռեեստրի ազգային գործակալություն → www.napr.gov.ge ........ 15

«Միջազգային թափանցիկություն՝ Վրաստան» Ընկերությունների որոնողական առցանց հարթակ → www.companyinfo.ge ........ 23

**Հողի սեփականություն** ........ Error! Bookmark not defined.

Հանրային ռեեստրի ազգային գործակալություն → www.napr.gov.ge ........ 24

Թվային քարտեզներ → www.napr.gov.ge ........ 27

**Պետական պաշտոնյաների հայտարարագրեր → www.declaration.gov.ge** ........ **29**

**Կուսակցական նվիրատվություններ→ www.sao.ge** ........ **32**

**Հանրային ռեեստրի հարթակների վրա հիմնված այլ ռեեստրներ** ........ **33**

Գրավական (հիփոթեքային) ռեեստր → naprlmr.reestri.gov.ge ........ 33

Պարտապանների ռեեստր → www.debt.reestri.gov.ge ........ 35

Կուսակցական միավորումների ռեեստր → napr.gov.ge ........ 35

**Ընտրական տվյալների առցանց հարթակներ** ........ **36**

Կենտրոնական ընտրական հանձնաժողով→results.cec.gov.ge ........ 36

Կենտրոնական ընտրական հանձնաժողով →voters.cec.gov.ge ........ 36

Ջամփսթարր→Mashasada.me ........ 38

**Իրավաբանական տվյալների բազաներ** ........ Error! Bookmark not defined.

Վրաստանի օրենսդրական լրատու→matsne.gov.ge ........ 38

Վրաստանի խորհրդարան→parliament.ge ........ 42

Վրաստանի իշխանություն, Վրաստանի նախագահ →Government.gov.ge and president.gov.ge ........ 44

**Վրաստանի հաղորդակցության ազգային հանձնաժողովի տվյալներ** ........ **44**

Տեղեկատվություն հեռուստահաղորդակցական ընկերությունների մասին → www.gncc.ge ........ 44

Գերատեսչական ռեեստր → www.gncc.ge ........ 45

Վերլուծական հարթակ → www.analytics.gncc.ge ........ 45

**Առևտրային բանկերի օգտատիրական սեփականություն → www.nbg.gov.ge** ........ **45**

**Դատական որոշումներ** .......... **46**
Սահմանադրական դատարան → www.constcourt.ge .......... 46
Գերագույն դատարան → www.supremecourt.ge .......... 47
Թբիլիսիի քաղաքային դատական գործեր → www.tcc.gov.ge .......... 48
Տվյալներ ընդհանուր դատարանների մասին → *www.geocourts.ge* .......... 48
**Բյուջետային տվյալներ** .......... Error! Bookmark not defined.
Պետական բյուջե → www.mof.gov.ge .......... 49
Պետական պարտք → www.mof.gov.ge .......... 50
Տեղական ինքնակառավարական բյուջեներ .......... 50
**Եկամուտների ծառայության տվյալներ** .......... **51**
Հարկային զիջումներից օգտվողների ռեեստր → www.rs.ge .......... 50
Դրամախաղային բիզնեսի արտոնագրման ռեեստր → www.rs.ge .......... 51
Ապրանքային կոդերի ռեեստր → www.rs.ge .......... 52
Ներմուծման-արտահանման տվյալներ → www.rs.ge .......... 52
Ու՞մ է պատկանում ինտերնետ տիրույթը՝ GE դոմեն → www.registration.ge .......... 52
Միջազգային տիրույթներ → www.domaintools.com .......... 52
**Ընդհանուր վիճակագրական տեղեկատվություն** .......... **53**
Սաքստատ (Վրաստանի վիճակագրություն) → www.geostat.ge .......... 53
CRRC- ի հարցումների տվյալներ → www.caucasusbarometer.org .......... 53
**Նավեր և ինքնաթիռներ** .......... **53**
Վրաստանի օդանավակայաններն ու ինքնաթիռները → www.gcaa.ge .......... 53
Նավերի մասին տեղեկատվություն ստանալու համար հետնել → Marinetraffic.com & Vesseltracker.com .......... 54
**Ինչպե՞ս հետևել արտասահմանյան ընկերություններին** .......... **55**
Հետազոտական վահանակ → www.investigativedashboard.com .......... 56
Տեղեկատվություն օֆշորներից → http://offshoreleaks.icij.org .......... 56
ԱՄՆ արժեթղթերի և բորսայի տվյալներ → www.secinfo.com .......... 57
**Ինչպե՞ս իրականացնենք մեր տվյալների զննականացում** .......... **55**
**Հավելված** .......... Error! Bookmark not defined.

# Ներածություն

Վրաստանը բաց տվյալների տեսանկյունից նկատելի առաջխաղացում ապրեց: Ցանկացած քաղաքացու համար մատչելի են բազմաթիվ հետաքրքիր կայք էջեր՝ Արդարադատության նախարարության գործարարական ռեեստրում հավաքած է տվյալներ բոլոր ընկերությունների և դրանց սեփականատերերի մասին, պետական պաշտոնյաների գույքային հայտարարագրերը, էլեկտրոնային և պարզեցված գնումների տվյալները (հանրայնացված և անվճար) լրիվությամբ մատչելի են: Միևնույն ժամանակ առանց հանրային տեղեկատվության հայցի կարող եք ձեռք բերել տվյալներ կուսակցությունների նվիրատվությունների մասին: Բաց տվյաներ ունենալը անչափ կարևոր առավելություն է, թեև վրացական ԶԼՄ- ները լիարժեք չեն օգտագործում այդ տվյալները: «Միջազգային թափանցիկություն՝ Վրաստանը» 2014 թվականի հուլիսին մեկ ձեռնարկի մեջ հավաքեց բոլոր օգտակար ռեսուրները: Երկու տարի անց ներկայացնում ենք այդ ձեռնարկի նորացված տարբերակը, որտեղ հաշվառում ենք մի քանի նոր աղբյուրներ և ձեր ուշադրությունն ենք հրավիրում մեր կողմից արդեն հաշվառած կայք էջերի նոր ֆունկցիաների վրա:

# ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ → tenders.procurement.gov.ge

Էլեկտրոնային գնումների պաշտոնական հարթակը հնարավորություն է տալիս վերահսկել պետական գնումների բոլոր համաձայնագրերը, ընդ որում անմրցույթ, ուղղակի ճանապարհով շնորհած պայմանագրերը: Նախքան կայքում որոնելն սկսելը պետք է իմանաք, որ պետական գնումների հարթակը ներառում է հետևյալ տեսքի թենդեր.

- Էլեկտրոնային թենդեր՝ թենդերներ, որոնց ենթադրյալ արժեքը գերազանցում է 200000 լարին:
- Պարզեցված էլեկտրոնային թենդեր՝ պարզեցված ընթացակարգերի կիրառմամբ հնարավոր է այն թենդերների գնումը, որոնց արժեքը գերազանցում է 200 000 լարին:
- Համախմբված թենդեր՝ դրանք այն թենդերներն են, որոնցում մատակարարները կատարում են մրցութային հայտարարություն ոչ թե թենդերի ընդհանուր արժեքի, այլ միավորի գնի հիման վրա: Այս օրենքը կիրառվում է այնպիսի ապրանքի գնման ժամանակ, ինչպիսին է , օրինակ՝ վառելանյութը:
- Պարզեցված գնումներ. 5 000 լարին չգերազանցող արժողությամբ միատեսակ առարկաների պետական գնման մեթոդ, որը կիրառվում է իշխանության համաձայնությամբ անհետաձգելի անհրաժեշտության դեպքում:
- Մրցույթ՝ գնման այլընտրանքային միջոց, որը կիրառվում է նախագծային սպասարկման կամ կառույցի ապամոնտաժման կամ/նաև ապամոնտաժման արդյունքում մնացած տարածքը շինանյութից և թափոններից ազատման ծառայության գնում:

Սկզբնապես, նախքան tenders.procurement.gov.ge-ում որոնում սկսելը անհարաժեշտ է այնտեղ գրանցվել:

Համակարգ մտնելուց հետո պայմանագրերը կարող եք գտնել ըստ հետևյալ հարաչափերի՝ թենդերի նույնականացման կոդ, գնորդ, մատակարարող, թենդերի կարգավիճակ, թենդերի տիպ, թենդերի կատեգորիա և ամսաթիվ:




Տվյալների բազայի վերևի մասում կա մի քանի հավելված՝

ePLAN→ Այստեղ կարող եք տեսնել հանրային հաստատեւությունների կողմից ապագայում պլանավորած գնումների բոլոր թենդերները: ePLAN-ի վրա սեղմելով կանցնեք նոր էջ, որտեղ կարող եք գտնել կոնկրետ գնորդ և տեղեկանալ, թե որ եռամսյակում է նա պլանավորել թենդերի հայտարարումը: Նշված համակարգը հնարավորություն է տալիս տեսնել նաև ֆինանսավորման աղբյուրը: Ի նկատի ունեցեք, որ հանրային հաստատությունները պարտավոր են նախպես տեղադրել տեղեկատվություն պլանավորած գնումների մասին:

CMR → Գործակալությունը հրապարակում է նաև պարզեցված գնման կարգով շնորհած բոլոր պայմանագրերը: Էլեկտրոնային գնումների հարթակի վրա տեղադրման պարտականությունը պարզեցված գնումների վրա չի տարածվում: Գնումների այս տիպերը, էապես, իրենցից ներկայացնում են ուղղակի գնում: Այս ընթացակարգը կիրառվում է 5000 լարիից ցածր արժեքի գնումների, անհետաձգելի անհրաժեշտության գնումների, դիվանագիտական առաքելությունների ժամանակ իրականացրած ծախսերի և իշխանության համապատասխան համաձայնության հիման վրա իրականացրած գնումների դեպքում:

SMP→ Այստեղ ի մի են բերված պարզեցված գնումների իրականացման մասին համաձայնագրերը: Գնորդները պարզեցված գնումները համաձայնեցնում են գնումների գործակալության հետ և նրանցից թույլտվություն ստանալու դեպքում

իրականացնում: Այստեղ հնարավոր է տեղեկանալ, թե ինչու է որոշել գնորդը դիմել պարզեցված գնման ձևին:

**Վեճերի քննարկման խորհուրդ** → https://tenders.procurement.gov.ge-ի առաջին էջում տեղադրված է բողոքարկած թենդերների ցանկը: Գոյություն ունի վեճերի քննարկման հատուկ խորհուրդ, որը քննարկում է կոնկրետ թենդերների հետ կապված բողոքները: Հետաքրքրված մարդիկ կամ թենդերի մասնակիցները, որոնք կասկածում են, թե կան թենդերի հետ կապված որոշակի օրենսդրական խախտումներ, ունեն թենդերը բողոքարկելու իրավունք, որի համար թենդերի էջում պետք է լրացնեն համապատասխան ձև: Խորհուրդը քննարկում է նաև այն բողոքները, որոնք ներկայացված են այն հետաքրքրված քաղաքացիների կողմից, ովքեր վերահսկում էին կոնկրետ թենդերը, թեև նրա հետ անմիջական կապ չունեն, ինչը գործնականում նշանակում է, որ թենդերը կարող է բողոքարկել ցանկացած գրանցված սպառող: Բողոք որոնել հնարավոր է առցանց ռեժիմում, դրանք դասավորված են ըստ տիպի և գտնվում են յուրահատուկ թենդերային համարի ներքո:

Թենդերին մասնակցող անձը կարող է նախքան թենդերն սկսվելը առցանց ռեժիմում գնորդ կազմակերպությանն առաջադրել հարցեր, իսկ գնորդ կազմակերպությունը պարտավոր է նախքան թենդերը սկսելը ողջամիտ ժամկետում պատասխանել հարցերին: Այս հաղորդակցությունը հնարավոր է տեսնել թենդերի էջում:

Սև ցուցակ → Մրցակցության և պետական գնումների գործակալությունն ունի այն ընկերությունների ցուցակը, որոնք նախկինում համաձայնագրի պայմանները չեն կատարել կամ թենդերին մասնակցելու ժամանակ ներկայացրել են սխալ տեղեկատվություն: Սև ցուցակը հանրայնորեն մատչելի է, այն տեղակայված է մրցակցության և պետական գնումների գործակալության կայքի գլխավոր էջում:

Սպիտակ ցուցակ → Գնումներին մասնակից որակյալ մատակարարողների ռեեստր, որը պետական գնումների գործակալությունը ներկայացնում է էլեկտրոնային տեսքով՝ տեղադրելով իր պաշտոնական կայք էջում:

Զգուշացված մատակարարողների ցուցակ՝ այն մատակարարողների ցուցակը, որոնք գնումների ընթացքում թույլ են տվել որևէ խախտում, սակայն նրանց ցուցակ

մտցնելով կխախտվի համաչափության սկզբունքը: Ցուցակն հանրայնորեն տեղադրված է գնումների գործակալության պաշտոնական կայք էջում: Ձննականության համար առաջարկում ենք քննարկել տեղեկատվությունը Զուգդիդիի քաղաքապետարանի կողմից թանկարժեք ջիպանման մեքենա գնելու վերաբերյալ հայտարարած մի թենդերի մասին:




Թենդերի մասին մանրամասն տեղեկություն ստանալու համար սեղմեք աջ կողմում դեղին գույնով նշված թենդերի բաժնի վրա: Թենդերային տեղեկատվության մանրամասն ցուցակը, որպես օրենք, ունի 4 հավելված՝ «թենդերի մասին մանրամասն տեղեկություն», «փաստաթղթեր», «տեղեկատվություն թենդերային հայտի մասին» և «արդյունքներ»:

Թենդերի գլխավոր էջում դրված է հիմնական տեղեկություն թենդերի մասին, օրինակ՝ թենդերի տիպը, համարը, գնորդը, թենդերի ստատուսը, կարգավիճակը, լրացուցիչ տեղեկատվություն, երաշխիքային գումարը, արժեքը և այլն:




Երկրորդ էջում տեղադրված է գնորդի կողմից հրատարակած PDF ֆորմատի փաստաթուղթ և այն ֆայլերը, որոնց ընդունում-փոխանակումը իրականացվել է թենդերին մասնակից և գնորդ կողմերի միջև:




Հաջորդ էջում տրված է թենդերային ընթացակարգի նկարագիրը, առաջարկած արժեքներն ու հայտատուների անունները:

Եթե սեղմեք թենդերին մասնակից ընկերության կամ անձի անվան վրա, համակարգը

ցույց կտա մանրամասն տեղեկատվություն նշված անձի կամ ընկերության վերաբերյալ:



Հաջորդ էջում համակարգը թենդերին մասնակից կողմերի շահերի անհամատեղելիության բացակայությունը հաստատող փաստաթղթեր է դուրս բերում: Այստեղ կարող եք տեսնել նշված թենդերների հետ կապված հիմնական փաստաթղթերը, որին հետևում են թենդերում հաղթող կողմի հետ կապված տեղեկությունն ու համաձայնագրի պատճենը:




Պետական հաստատությունների կողմից ձևակերպած պարզեցված գնման պայմանագրերի էլեկտրոնային ռեեստրը վրացական էլեկտրոնային թենդերային համակարգի այն արժեքի հավելաճերի միջև է գտնվում, որոնց օգնությամբ այն թափանցիկության և կիրառման պարզության տեսակետից համարվում է ամենալավերից մեկն աշխարհում գոյություն ունեցող համակարգերի միջև:

Պարզեցված գնումների տվյալների բազա մուտք ձեռք բերելու համար սպառողը պետք է սեղմի վերնի աջ անկյունի CMR կոչվող հղումը:

.




Այստեղ կարող եք գտնել պայմանագրեր ըստ CMR կոդի, մատակարարի, գնորդ կազմակերպությունների, գնման տիպերի և CPV կոդի: Բացի դրանից, կարող եք նշել ամսաթվեր, որոնց սահմաններում ցանկանում եք գտնել տեղեկատվություն, կամ ձեզ հետաքրքրող պայմանագրերի արժեքները:

Պայմանագրերը դասավորված են աջ կողմում և միանգամից կարելի է տեսնել 5 պայմանագիր, ավելի մանրամասն տեղեկություն ստանալու համար օգտվողը պետք է սեղմի դրանց վրա: Այդ համակարգի ներմուծումն անկասկած ունեցել է մեծ ազդեցություն Վրաստանում պարզեցված գնման գործընթացի թափանցիկության վրա, սակայն դա չի նշանակում, որ տվյալների բազան թերություններ չունի:

Օրինակ, բոլոր համաձայնագրերը միասին տեսնելն անհնար է, համակարգի HTML կոդի պատճառով նրանում դժվար է աշխատելը: Բացի դրանից, անկառավարելի է որոնողական համակարգը՝ այն չի ապահովում որոնման արդյունքի հուսալիությունը նշված ժամկետում:

| |
|---|
| Կարևոր է, պայմանագրի համակարգում գրանցումը տարբերենք պայմանագրի ստորագրման ամսաթվից: Դրանք տարբեր ամսաթվեր են, քանի որ ի տարբերություն էլեկտրոնային գնումների, երբ թենդերը դեռ գրանցվում է համակարգում և դրանից հետո է սկսվում մրցույթը, այս դեպքում պայմանագրի գրանցումն իրականացվում է այն ստորագրելուց հետո, երբ գնորդը համապատասխան տեղեկատվություն կուղարկի գործակալություն, որը տրված պայմանագիրը կհաշվառի համակարգում: Այդ գործընթացը հաճախ հանգեցնում |

է տվյալների բազայում տեղեկատվության ուշացումով արտահայտման: Ելնելով մեր փորձից, տիպիկ պայմանագրի դեպքում ուշացումը միջին հաշվով կարող է կազմել մոտ  2 ամիս, սակայն եղել են դեպքեր, երբ պայմանագրի գրանցումը կողմերի կողմից իրականացվել է նրանց ստորագրումից 6-7 ամիս անց:

Եկեք, օրինակի համար, քննարկենք մի պայմանագիր, որը ստորագրել են Վրաստանի Արդարադատության նախարարությունը և իտալական *Permasteliza* ընկերությունը: Պայմանագիրը վերաբերում է Վրաստանի Արդարադատության նախարարության շենքի կտուրի կառուցմանը:




Պայմանագրի մասին տեղեկատվության շարքի վրա սեղմելուց հետո համակարգը օգտվողին կտեղափոխի պայմանագրի էջ, որի վրա տեղադրված է մանրամասն տեղեկատվություն գնորդ կողմերի (տվյալ դեպքում կա երկու կողմ՝ համապատասխան բաժինների նշմամբ), մատակարարողի, պայմանագրի արժեքի և վճարման օրերի, ֆինանսավորման աղբյուրի, գնման լիազորման, պայմանագրի տեքստի սկանավորված տարբերակի հղումի, պայմանագրի ժամկետի և այն ավարտելու ժամկետի վերաբերյալ:

# Ընկերությունների սեփականությունը

**Հանրային ռեեստրի ազգային գործակալություն → www.napr.gov.ge**

Ընկերությունները և դրանց սեփականատերերին գտնելու համար կարող եք կիրառել [http://napr.gov.ge-ի](http://napr.gov.ge) վրա գտնվող հանրային ռեեստրի տվյալների բազան: Այդ որոնումը հնարավոր է կայք էջի միայն վրացալեզու տարբերակում: Գլխավոր էջում պետք է սեղմենք բիզնեսի ռեեստր գրառումը, այնուհետև՝ գտի՛ր գործարարին/իրավաբանական անձին:




Լիարժեք տեղեկատվություն ստանալու համար սեղմեք որոնման պատուհանի տակ տեղադրված հղումը՝ «մանրամասն որոնում», որը կփոխադրի գործարարական (ոչ գործարար) իրավաբանական անձանց ռեեստրի տվյալների բազայի մանրամասն տեղեկատվության բազա:




Տվյալների բազայում տեղեկատվություն կարող եք ձեռք բերել ըստ հետևյալ տվյալների →

- Նույնականացման կոդ կամ անձնական համար
- Ընկերության անվանումը
- Իրավական ձևը
- Էլ-փոստ

Առաջին հերթին համոզված պետք է լինեք, որ նշում եք ընկերության ճիշտ անվանումը: Ի նկատի ունեցեք, որ ընկերությունների իրավական/գրանցման անվանումը և բրենդի անվանումը հաճախ միմյանցից տարբերվում են: Եթե չգիտեք ընկերության ճիշտ անվանումը, համակարգը կառաջարկի նման անվանման ընկերությունների տասնյակ հավանական տարբերակ: Նման շփոթմունքը բացառելու համար լավ կլինի ունենալ ընկերության նույնականացման կոդը: Թերևս իրականում նվազ հավանական է, որ հետազոտողը նախապես իմանա ընկերության նույնականացման կոդը: Որպես օրենք, սկզբում հայտնի է լինում միայն ընկերության անվանումը:

Նման դեպքում օգտվողը կարող է որոնել ընկերությունը երկրորդ տվյալով՝ սկսելով ընկերության անվանմամբ: Ընդհանրապես, ընկերության լրիվ անվանմամբ որոնումը

նպատակահարմար չէ, քանի որ անվանարկման որոշակի չափորոշիչ գոյություն չունի:

Օրինակի համար վերցնենք հիշյալ ընկերության անվանումը՝ «Ջի-էիչ-սի»: Նման ընկերությունը կարող է գրանցված լինել հետևյալ ցանկացած համադրությամբ՝ «Ջիեիչսի» «Ջի-էիչ-էս» և այլն: Եթե նույնիսկ մեկ բառ սխալ մուտքագրեք, տվյալների բազան չի կարողանա ձեր որոնած ընկերությունը նույնականացնել: Սակայն կայք էջի հաճախակի կիրառման արդյունքում սպառողը, սովորաբար, գլխի է ընկնում, թե ինչ տիպի հուշում պետք է օգտագործի:

Ծանոթագրություն՝ ցանկալի է, որոնվող անվանումը մուտքագրել ոչ լիարժեք տեսքով, միայն թե նշված տվյալը տրված ընկերության համար պետք է յուրահատուկ լինի:

Օրինակ, եթե ընկերությունը փնտրում է ըստ անվանման «ՀԻ Ճիաթուրայի նավթային արդյունաբերություն», համակարգն ընկերությունն այն դեպքում ցույց կտա, եթե պահանջում լինի միայն «Ճիաթուր» բառը:




| | საიდენტიფიკაციო კოდი | პირადი ნომერი | დასახელება | სამართლებრივი ფორმა | სტატუსი |
|---|---|---|---|---|---|
| | 415590462 | | ჭიათურის რაიონული ჭადრაკის ფედერაცია | არასამეწარმეო (არაკომერციული) იურიდიული პირი | რეგისტრირებულია |
| | 400048088 | | ჭიათურისა და საჩხერის ეპარქიის წმინდა დიმიტრი ყიფიანის სახელობის ქართულ-ევროპული საგამომცემლო, საქველმოქმედო ცენტრი - „სპეკალი" | არასამეწარმეო (არაკომერციული) იურიდიული პირი | რეგისტრირებულია |
| | 415589875 | | ჭიათურის დასუფთავებისა და კეთილმოწყობის სერვისცენტრი | არასამეწარმეო (არაკომერციული) იურიდიული პირი | რეგისტრირებულია |
| | 215593604 | | სს ჭიათურის ნავთობპროდუქტ | სააქციო საზოგადოება | რეგისტრირებულია |
| | 415589410 | | შპს ჭიათურა 2 | შეზღუდული პასუხისმგებლობის საზოგადოება | რეგისტრირებულია |

Անվանարկման չափորոշչի ընդունման նշանակությունը փաստարկում է հետևյալ օրինակը. Ենթադրենք, մեր հետազոտման առարկան է հեռարձակող ընկերություն «Ռուսթավի 2»: «Ռուսթավի 2» պահանջը դրական արդյունք չի տա:




| | საიდენტიფიკაციო კოდი | პირადი ნომერი | დასახელება | სამართლებრივი ფორმა | სტატუსი |
|---|---|---|---|---|---|
| | 416303654 | | შპს რუსთავი 2013 | შეზღუდული პასუხისმგებლობის საზოგადოება | რეგისტრირებულია |
| | 416297340 | | შპს რუსთავი-პერლიტი 2012 | შეზღუდული პასუხისმგებლობის საზოგადოება | რეგისტრირებულია |
| | 416296975 | | შპს რუსთავი 2012 | შეზღუდული პასუხისმგებლობის საზოგადოება | რეგისტრირებულია |
| | 400021962 | | შპს ავტოპაუსი - რუსთავი 2011 | შეზღუდული პასუხისმგებლობის საზოგადოება | რეგისტრირებულია |
| | 423098114 | | რუსთავი-2010 | არასამეწარმეო (არაკომერციული) იურიდიული პირი | რეგისტრირებულია |

Այս օրինակը պարզ է դարձնում տվյալների բազայում գոյություն ունեցող անհամապատասխանությունը՝ իսկ մեր որոնողական արտահայտությունը ընկերության անվան մասն է, սակայն տվյալների բազան, ի տարբերություն «Ճիաթուրնավթոբիի» դեպքի, ընկերության անվանումը դուրս չի բերում: Այս դեպքում ճիշտ համապատասխանություն գտնելու համար ընկեության անվանման տարբեր խաղարկումը ստիպում է մտածել այն մասին, թե ինչ կերպ կարող էր գրանցված լինել ընկերությունը տվյալների բազայում՝ որպես «Ռուսթավի-2», Ռուսթավի 2», ««Հեռուստաընկերություն Ռուսթավի 2» թե այլ...

Ծանոթագրություն՝ բաժնետիրական սեփականության հետ կապված տեղեկատվությունը Վրաստանում մատչելի չէ, քանի որ պետական օրենսդրությունը այս տիպի ընկերություններից այդպիսի տեղեկատվություն ներկայացնել չի պահանջում: Այն դեպքում, թե ընկերությունը սկզբնապես գրանցված է եղել որպես ՍՊԸ և հետո վերածվել բաժնետիրական ընկերության, տվյալների բազայում նրա սեփականության մասին տեղեկատվությունը, որպես օրենք, ցույց է տալիս մինչև նրա որպես բաժնետիրական ընկերություն ձևակերպման պահին ընկած ժամանակահատվածը:

Ծանոթագրություն.

Վրաստանի օրենսդրությունը չի արգելում ընկերության գրանցումը նույն անվամբ, որով նախքան այդ որևէ այլ ընկերություն, հնարավոր է, գրանցված լիներ: Այնպես որ, կոչ ենք անում լինել առավել զգույշ: Փորձեք միշտ լրացուցիչ վերստուգել ձեր գտած ընկերությունը:

- Բացառված չէ, որ նման դեպքում պահանջելիս երևա միայն այն մյուս ընկերությունը և ոչ թե այն, որը դուք փնտրում եք (նույնիսկ միանման անունների դեպքում): Այնպես որ, ևս մեկ անգամ կոչ ենք անում, բոլոր տվյալների համընկման դեպքում էլ վերստուգել ընկերության տվյալները:

Ընկերությունը գտնելուց հետո սեղմեք "i" կապույտ կոճակը: Այստեղ պետք է մտցնենք պաշտպանիչ կոդ: Անցնում ենք հաջորդ ընկերության էջին, որն ունի հետևյալ տեսքը.




| ინფორმაცია სუბიექტზე | |
|---|---|
| საიდენტიფიკაციო კოდი | **202052054** |
| პირადი ნომერი | |
| სახელმწიფო რეგისტრაციის ნომერი | 2/4-191 |
| დასახელება | **შპს ორიენტ ლოჯიკი** |
| სამართლებრივი ფორმა | **შეზღუდული პასუხისმგებლობის საზოგადოება** |
| სახელმწიფო რეგისტრაციის თარიღი | 20 ნოემბერი 1995 |
| სტატუსი | **რეგისტრირებულია** |

**განცხადებები**

| რეგ. # | მომს. სახე | სტატუსი | თარიღი |
|---|---|---|---|
| **B14021377** | **ინფორმაცია მეწარმეთა და არასამეწარმეო იურიდიულ პირთა რეესტრიდან** | **სარეგისტრაციო წარმოება დასრულებულია** | **04 მარტი 2014** |
| **B14021202** | **ამონაწერის მომზადება მეწარმეთა და არასამეწარმეო იურიდიულ პირთა რეესტრიდან** | **სარეგისტრაციო წარმოება დასრულებულია** | **04 მარტი 2014** |
| **B14017688** | **ამონაწერის მომზადება მეწარმეთა და არასამეწარმეო იურიდიულ პირთა რეესტრიდან** | **სარეგისტრაციო წარმოება დასრულებულია** | **21 თებერვალი 2014** |
| **B14010032** | **ამონაწერის მომზადება მეწარმეთა და არასამეწარმეო იურიდიულ პირთა რეესტრიდან** | **სარეგისტრაციო წარმოება დასრულებულია** | **03 თებერვალი 2014** |
| **B14005990** | **ამონაწერის მომზადება მეწარმეთა და არასამეწარმეო იურიდიულ პირთა რეესტრიდან** | **სარეგისტრაციო წარმოება დასრულებულია** | **22 იანვარი 2014** |

Այս էջն ունի հետևյալ կառուցվածքը. Ընկերության նույնականացման կոդը, անձնական համարը, պետական գրանցման համարը, (չշփոթեք ընկերության նույնականացման կոդի կամ անձնական համարի հետ), անվանումը, իրավական

ձևը, պետական գրանցման ամսաթիվը, կարգավիճակը, որին հետևում է փաստաթղթերի ցուցակը, որը կարելի է բաժանել երեք մասի.

- Ընկերության սեփականության մասին տեղեկատվության պահանջի հիման վրա պատրաստված է քաղվածք ձեռներեց և ոչ ձեռներեց իրավական անձանց ռեեստրից:
- **Սեփականության կարգավիճակի հետ կապված տարբեր տեսքի տեղեկատվություն** ձեռներեց և ոչ ձեռներեց իրավական անձանց ռեեստրից:
- Ընկերության սեփականության կառուցվածքում իրականացված յուրաքանչյուր փոփոխությունից հետո սուբյեկտի գրանցված տվյալներում փոփոխման գրանցում:




Եթե սեղմեք ձեռներեց և ոչ ձեռներեց **իրավական անձանց ռեեստրի** «քաղվածքի պատրաստում» բաժնի վրա կամ «տեղեկատվություն» ձեռներեց և ոչ ձեռներեց **իրավական անձանց ռեեստրից բաժնի, համակարգը կվերահասցեագրի փաստաթղթի այլ էջ, որը պարունակում է կողմի ներկայացրած սկզբնական փաստաթուղթը, հանրային ռեեստրի կողմից մշակված փատաթուղթն ու, որ կարևոր է, քաղվածք,** որը տրվում է գործընթացի ավարտից հետո:

Ծանոթագրություն.

Ի նկատի ունեցեք, որ հազվադեպ, սակայն հնարավոր է, պարզվի, որ գործընթացի ավարտից հետո պատրաստած վերջնական ֆայլը դատարկ է:

Քաղվածքը, որպես օրենք, տեղադրված է էջի վերին մասում, փաստաթուղթը, որը փնտրում ենք, հենց դա է: Այն ներկայացված է PDF ֆորմատով: Սուբյեկտի գրանցված տվյալներում փոփոխությունների գրանցման դեպքում միակ տարբերությունն այն է, որ այդ էջում ֆայլերը ներկայացված են .djvu format-ով: Իսկ այս ֆորմատին djvu reader է անհրաժեշտ (այս ծրագիրը կարելի է ներբեռնել անվճար՝ տես ներքևի հղումները):

Djvu ֆայլերը պարունակում են տեղեկատվություն սեփականատերերի հանդիպման, իրավաբանական ներկայացուցիչների, տնօրենների և երբեմն, օֆշորային ընկերությունների սեփականատերերի մասին: Երբեմն նման ֆայլերում կա տեղեկատվություն գրավի մասին, կամ դատարանի կողմից ընկերությունների դեմ կայացրած որոշումներ: Այն Djvu ֆայլերը, որոնք անվանված են աշխատակիցների անուններով, կարևոր չեն, արժեքավոր են այն ֆայլերը, որոնց անունները թվեր են պարունակում: Բաժնետիրական ընկերությունների դեպքում djvu ֆայլը կարող է ցույց տալ սեփականատերերի ինքնությունը: Եվ հիշեք՝ օֆշորում գրանցված ընկերությունների մասին կարող եք ձեռք բերել առավել արժեքավոր տվյալներ djvu ֆայլերի միջոցով:

Ծանոթագրություն.
Ընկերության պրոֆիլի էջում կարող եք հայտնաբերել պահանջ ներկայացնող ընկերության տնօրենի կամ ներկայացուցչի անձնական համարը կամ հասցեն:
Ընկերության պրոֆիլի էջի ամենավերջում կարող է տրվել արխիվային փաստաթղթերի ցանկ, ինչը երկարատև պատմության և/կամ սեփականության մեջ խնդրահարույց փոփոխություններ ունեցող ընկերության դեպքում կարող է անգնահատելի արժեք ունենալ:

**Քաղվածքն այն կարևոր ֆայլն է, որը որոնում ենք ընկերության պրոֆիլում: Այս ֆայլն ընդհանրապես բաժանվում է մի քանի մասի:**

- Վերնի մասում տրված է դիմումի համարը, դիմումի գրանցման համարը և քաղվածքի պատրաստման ամսաթիվը:
- Այնուհետև գալիս է տեղեկատվություն ընկերության վերաբերյալ, օրինակ՝ անվանումը, գրանցման վայրը, անձնական համարը, ընկերության տիպը, գրանցման ամսաթիվը, պետական գրանցման անձնական համարը (չշփոթել ընկերության նույնականացման կոդի հետ) և այն պետական մարմինը, որը գրանցել է ընկերությունը:
- Այնուհետև տրված է ընկերության կառավարման համար պատասխանատու անձանց ցուցակը:
- Հաջորդ բաժանմունքում մանրամասնորեն են նկարագրած ընկերության գործընկերները իրենց անձնական համարի, անվան և այն մասնաբաժնի նշմամբ, որին տիրապետում են նշված ընկերության մեջ:
- Եթե ընկերությունը վերակազմակերպվեց, կամ միացավ մեկ այլ սուբյեկտի, համապատասխան տեղեկատվությունը մանրամասնորեն կնշվի հաջորդ բաժնում:
- Բիզնեսի ռեեստրը հնարավորություն է տալիս ձեռք բերել տեղեկատվություն այն անձանց մասին, ովքեր մասնակցում են ընկերությանը: Դրա համար պետք է օգտվենք «մասնակիցներով որոնում» բաժնից:




**«Միջազգային թափանցիկություն՝ Վրաստան» ընկերությունների որոնողական առցանց հարթակ՝ www.companyinfo.ge**

Companyinfo.ge -ն «Միջազգային թափանցիկություն՝ Վրաստանի» կողմից ստեղծած կայք է, որը հիմնված է հանրային ռեեստրի պաշտոնական տվյալների վրա: 2014 թվականին հանրային ռեեստրի ազգային գործակալությունը բիզնեսի ռեեստրի վրա պաշտպանիչ կող դրեց, որի արդյունքում companyinfo-ում տվյալները հնարավոր չէ թարմացնել:

www.companyinfo.ge-ի կարևոր առավելությունն այն է, որ այն պարզեցնում է ընկերության անձնական համարի որոնման գործընթացը, ինչը, սովորաբար, որոշիչ պահ է հետազոտելիս:

Ի տարբերություն հանրային ռեեստրի պաշտոնական կայքի, այս կայքում որոնումը կարող եք իրականացնել, ինչպես ընկերությունների, այնպես էլ անհատների անունների միջոցով: Ցանկացած պահանջի արդյունքում հայտնվում է էջ, որտեղ կարող եք տեսնել ընկերությունների և գործարարների ծավալուն ցուցակ:




## Հողի սեփականություն

**Հանրային ռեեստրի ազգային խորհուրդ → www.napr.gov.ge**

Հողի ռեեստրի տվյալների բազան տեղադրված է պետական ռեեստրի reestri.gov.ge կայք էջում: Այնտեղ մուտք գործելու համար կայքի դասակարգիչների էջում սեղմեք «Անշարժ գույքի ռեեստր» բաժանմունքը, այնուհետև՝ «հայտարարության որոնում»:

Անշարժ գույքի տվյալների բազան կազմված է անշարժ գույքի կարգավիճակի փոփոխման գրանցման հետ կապված հայտարարություններից: Այստեղ սպառողը կարող է գտնել հայտարարություններ և քաղվածքներ ըստ հայտարարության գրանցման, գրանցման ամսաթվի, անձի/կազմակերպության, անշարժ գույքի հասցեի, հողի ռեեստրի (կադաստրային) կոդի:

> Ծանոթագրություն.
> Ըստ կադաստրային կոդի որոնելիս ի նկատի ունեցեք, որ թվերի միջև պետք է լինեն բաժանող կետեր: Յուրաքանչյուր երկու-երկու թիվ իրարից անջատեք կետով և վերջում թողեք երեք թիվ: Տներն ունեն ավելի երկար կադաստրային կոդեր:

Համակարգը պահանջին պատասխանում է տողերի տեսքով, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է գրանցված հայտ: Յուրաքանչյուր հայտ

մտնելիս կպահանջվի պաշտպանիչ կոդ հավաքելու:




Պաշտպանիչ կոդը հավաքելուց հետո օգտվողը տեղափոխվում է հայտի պրոֆիլի էջ: Այդ էջը կարելի է բաժանել երեք մասի՝ առաջին մասը քաղվածք է, որը մանրամասն նկարագրում է անշարժ գույքի սեփականության կարգավիճակը, երկրորդ մասը ցույց է տալիս հայտի մշակման ժամանակ ներկայացրած փաստաթղթերը: Երրորդ մասում տեղադրված է կոնկրետ տեղեկատվություն անձի, սեփականատիրոջ, սպասարկման տեսակի, վճարած գումարի, հայտը ներկայացնելու ամսաթվի և այն ժամանակի վերաբերյալ, որն անհրաժեշտ եղավ հայտը մշակելիս, ինչպես նաև՝ անշարժ գույքի հասցեի, կադաստրային կոդի և այլ լրացուցիչ տեղեկանքների մասին:




Հայտը ներառում է հանրային ռեեստրի քաղվածքներ, որոնց ներբեռնումը հնարավոր է PDF փաստաթղթի տեսքով: PDF ֆորմատի այս փաստաթուղթը պարունակում է տեղեկատվություն հողի կադաստրային կոդի, նրա տիպի (գյուղատնտեսական, ոչ գյուղատնտեսական և այլն...) մասին: Նրանում արձանագրված են սեփականատերերն ու հողի օգտագործման իրավունք ունեցող անձիք/ընկերությունները, այդպիսինները լինելու դեպքում: Համակարգը ցույց է տալիս նաև, թե գույքը գտնվու՞մ է, արդյոք, գրավի կամ՝ իրավապահպան օրգանների կողմից այլ որևէ սահմանափակման տակ:



**მესაკუთრის განყოფილება**

**განცხადების რეგისტრაცია : ნომერი 882010598615 , თარიღი 07/05/2010 15:40:32**
**უფლების რეგისტრაცია: თარიღი 07/05/2010**

**უფლების დამადასტურებელი დოკუმენტი:**

- ნასყიდობის ხელშეკრულება N1-13341 , დამოწმების თარიღი:15/11/2007 ,ნოტარიუსი ც. ბერიძე
- საკუთრების დამადასტურებელი მოწმობა. N441-ა , დამოწმების თარიღი:15/11/2007 , საქართველოს ეკონომიკური განვითარების სამინისტრო

**მესაკუთრეები:**
**ლევან ქარლავა**,P/N: 01024029319

| | |
|---|---|
| **მესაკუთრე:** | **აღწერა:** |
| **ლევან ქარლავა** | |

**იპოთეკა**

| | |
|---|---|
| **განცხადების რეგისტრაცია ნომერი 882010626795 თარიღი 25/05/2010 18:14:05** | **იპოთეკის ხელშეკრულება CMB 00177-2010/1, დამოწმების თარიღი25/05/2010, საქართველოს იუსტიციის სამინისტროს საჯარო რეესტრის ეროვნული სააგენტო** |
| **უფლების** | |

**Թվային քարտեզներ →  www.napr.gov.ge**

Թվային քարտեզները տեղադրված են հանրային ռեեստրի կայքի (www.napr.gov.ge) գլխավոր էջում, «Աշխարհագրական տեղեկատվություններ և քարտեզներ» բաժնում: Այս բաժնում կարելի է օգտվել տարբեր տեսակի սպասարկումից, ընդ որում, հնարավոր է տեսնել թվային քարտեզներ, ինչը հեշտացնում է գտնել անշարժ գույքը: Բաժնի քարտեզները ռեեստրի կադաստրային քարտեզների ենթաբաժինն են, որոնց թվին է պատկանում Վրաստանի մասշտաբով կադաստրային քարտեզը:




Կադաստրային քարտեզից կարելի է օգտվել այն դեպքում, եթե ցանկանում ենք

տեղեկատվություն որոնել անշարժ գույքի մասին և գիտենք, թե մոտավորապես որտեղ է գտնվում օբյեկտը, սակայն այլ տեղեկատվության չենք տիրապետում:

Քարտեզն ունի որոնման համակարգ, որը տեղադրված է էջի վերևի կողմում: Ընտրեք տարածաշրջանը (օրինակ` Թբիլիսի): Դրանից հետո նավիգացիայի (տեղորոշման համակարգ) օգնությամբ քարտեզի վրա կարելի է գտնել հողամասը, ինչը, հնարավոր է լինի բավականին աշխատատար և երկարաժամկետ գործընթաց:




\+ և - նշանների օգնությամբ հնարավոր է մոտիկացնել կամ հեռացնել քարտեզը, իսկ սլաքների միջոցով ընտրել ուղղությունները: Քարտեզի վրա նշած կոդերն ու գրառումները օգնում են տեղորոշման հարցում:




Որոնման արդյունքում կարող եք տեսնել հողամասի տեսքը և հարևան հողատարածքներն իրենց կադաստրային կոդերով: Կադաստրային կոդը գտնելուց

հետո արդեն հնարավոր է որոնել տեղեկատվություն անշարժ գույքի մասին:



## Պետական պաշտոնյաների հայտարարագրեր www.declaration.gov.ge

Վրաստանի կանոնադրությունը պետական պաշտոնյաներին պատաղրում է ամեն տարի ներկայացնել գույքային հայտարարագրեր, որոնք ներբեռնվում են  հանրային ծառայության բյուրոյի կայքում՝ www.declaration.gov.ge : Կայքում հայտարարագրերը կարելի է որոնել պետական պաշտոնյայի անվամբ, կամ ըստ այն առարկայի կամ բրենդի, որին կոնկրետ պետական պաշտոնյան, հնարավոր է, տիրապետում է (օրինակ, «Բենտլի»):




Որոնելիս, երբ անունը հավաքում եք անգլերեն լեզվով, եթե վրացական այբուբենի մի տառը անգլերեն լեզվով կարելի է արտահայտել տարբեր տառերով, համակարգը դա հասկանում է (օրինակ՝ Levan Kardava կամ Levan Qardava անուններով որոնումը կտա միևնույն արդյունքը):

| |
|---|
| Ծանոթագրություն. <br> Ուշադրություն դարձրեք անհատին, որպեսզի չշփոթեք միևնույն անունն ու ազգը ունեցող երկու անձանց, որոնք աշխատում են տարբեր հաստատություններում: |

Սովորաբար, հայտարարագիրը կազմում է մի քանի էջ, որոնցից յուրաքանչյուրը վերաբերում է այն ակտիվության առանձին տեսակին, որոնց, հնարավոր է, տիրապետում է տվյալ պետական պաշտոնյան կամ նրա ընտանիքի անդամը: Առաջին էջում տրված է պետական պաշտոնյայի անունը, հայտարարագրի ներկայացման ամսաթիվը, կազմակերպության անվանումը, հասցեն և այդ մարդու ծննդյան ամսաթիվը:

Հայտարարագրում հայտարարագրողի և նրա ընտանիքի անդամների մասին նշված է հետևյալ տեղեկատվությունը. անշարժ գույք, շարժական գույք, բանկային հաշվեհամարներ, ձեռքին եղած գումարը, ընկերությունների սեփականությունը, եկամուտը վճարվող աշխատանքից, նվերներ, որոնց գինը գերազանցում է 500 լարին:

https://declaration.gov.ge/declaration/48261

| თქვენი, თქვენი ოჯახის წევრის საკუთრებაში არსებული უძრავი ქონება | | | |
|---|---|---|---|
| ქონების მესაკუთრის სახელი, გვარი (თუ ნივთი საერთო საკუთრებაში იმყოფება, მიუთითეთ მფლობელის პროცენტული წილი) | ქონების სახეობა | ქონების ადგილმდებარეობა, საერთო ფართობი | თუ ნივთი საერთო საკუთრებაში იმყოფება, მიუთითეთ თანამესაკუთრეები (თუ თანამესაკუთრე თქვენი ოჯახის წევრია მიუთითეთ მისი პროცენტული წილი) |
| თეა წულუკიანი | მიწის ნაკვეთი | საქართველო, თბილისი, სოფელი დიღომი, ვაჟა-ფშაველას ქ., ფართობი - 900.00 კვ.მ | |
| თეა წულუკიანი | საცხოვრებელი სახლი | საქართველო, თბილისი, სოფელი დიღომი, ვაჟა-ფშაველას ქ., ფართობი - 400.00 კვ.მ | |
| თეა წულუკიანი | ავტოფარეხი | საქართველო, თბილისი, სოფელი დიღომი, ვაჟა-ფშაველას ქ., ფართობი - 30.00 კვ.მ | |
| თეა წულუკიანი | ბინა | საფრანგეთი, სტრასბურგი, დრაგონის ქ. 4, ფართობი - 120.00 კვ.მ | |
| თეა წულუკიანი | არასაცხოვრებელი ფართი | საფრანგეთი, სტრასბურგი, დრაგონის ქ. 4, ფართობი - 6.00 კვ.მ | |
| ბათუ წულუკიანი | მიწის ნაკვეთი | საქართველო, სოფელი მანავი, საგარეჯოს რაიონი, სოფელი მანავი, ფართობი - 1990.00 კვ.მ | |
| ავთანდილ წულუკიანი | მიწის ნაკვეთი | საქართველო, დუშეთის რაიონი, სოფელი ანანური, ანანურის ამხანაგური მეურნეობა, ფართობი - 1090.00 კვ.მ | |
| ავთანდილ წულუკიანი | საცხოვრებელი სახლი | საქართველო, დუშეთის რაიონი, სოფელი ანანური, ანანურის ამხანაგური მეურნეობა, ფართობი - 300.00 კვ.მ | |
| გიული შანიძე | ბინა | საქართველო, თბილისი 0102, უზნაძის ქ. 4, ფართობი - 120.00 კვ.მ | |
| გიული შანიძე | არასაცხოვრებელი ფართი | საქართველო, თბილისი 0102, უზნაძის ქ. | |

Ծանոթագրություն.

Չափազանց կարևոր տեղեկատվություն է ծննդյան ամսաթիվը, քանի որ հայտարարագրերը պետական պաշտոնյայի, նրա հարազատների կամ ընտանիքի անդամների անձնական համարները չեն ներառում: Այսպիսով՝ պետական պաշտոնյայի անձնական համարը պարզելու և նրա սեփականության մասին տեղեկատվություն տվյալների այլ բազայում որոնելու համար կիրառում ենք հանրային ռեեստրի տվյալները (բիզնեսի և անշարժ գույքի ռեեստրները), որտեղ փնտրում ենք նույն անունն ու ազգանունն ունեցող անձանց, այս տվյալների բազայից անձնական համարն ու ազգանունն ենք կիրառում ընտրողների տվյալների բազայում այդ անձանց ծննդյան ամսաթվերը պարզելու համար, ինչը համեմատում ենք սույն տվյալների բազայում նշված անձանց հետ, որպեսզի գտնենք այն մարդկանց, որոնց որոնում ենք:

Երբ որոնում եք իրականացնում ըստ առարկայի, օրինակ, «Բենթլի», «Մերսեդես», ագարակ Ծղնեթում, տուն Փարիզում, «Լեքսուս» և այլն, Տվյալների բազան ցույց է տալիս բոլոր այն հայտարարագրերը, որոնցում որևէ պետական պաշտոնյա նշում է տվյալ միավորը: Որպես նմուշօրինակ եկեք պարզենք, թե պետական պաշտոնյաներից ով ունի (կամ ուներ) «Բենթլի» ավտոմեքենա: Ինչպես պարզվում է, Վրաստանի Էներգետիկայի նախարար Կախա Կալաձեն միակ բարձրաստիճան պաշտոնյան է, որը սեփական ավտոտնակում ունի «Բենթլի»:




## Կուսակցական նվիրատվություններ → www.sao.ge

Պետական աուդիտի ծառայության կայքը պարունակում է տեղեկատվություն քաղաքական կուսակցությունների նվիրատվությունների մասին: Տվյալները մատչելի են www.sao.ge կայք էջի ֆինանսական վերահսկման կարգավիճակում: Կայք էջում տեղադրված տեղեկատվությունը քաղաքական կուսակցությունների հասցեով իրականացրած նվիրատվությունների մասին սկսվում է 2012 թվականից: Կարող եք ներբռնել ամենամյա նվիրատվություններ Excel-ի ֆորմատով, կամ՝ 2016 թվականի ամենամսյա կամ եռամսյակային տվյալներ:




# Հանրային ռեեստրի հարթակների վրա գտնվող այլ ռեեստրներ

## Գրավի (հիփոթեքի) ռեեստր→ naprlmr.reestri.gov.ge

Գրավի (հիփոթեքի) ռեեստր մուտք գործելու համար ուղղակի մտեք հանրայի ռեեստրի naprlmr.reestri.gov.ge կայքում տեղադրված որևէ տվյալների բազա: Այդ միջոցի օգնությամբ կտեղեկանաք, կոնկրետ ընկերության կամ անձի անվամբ պաշտոնապես գրանցվա՞ծ է, թե՝ ոչ  հարկային գրավ, հիփոթեք կամ այլ որևէ ֆինանսական սանկցիա:

Կայք էջն ունի երկու որոնողական համակարգ, մեկը  (հայտեր) ցույց կտա գրավի հետ կապված հանրային ռեեստր ներկայացրած բոլոր հայտերը  (առգրավում, արգելանք, հարկային գրավ/հիփոթեք), իսկ երկրորդ համակարգով (սահմանափակումներ/գրավ) կարող եք որոնել գրանցված հարկային գրավի դեպքեր: Փաստորեն, երկու համակարգն էլ միևնույն տեղեկատվությունն են տալիս:

- Հայտը հնարավոր է գտնել մի շարք պարամետրերի միջոցով՝ նախ կարող եք ընտրել հայտի տեսակը  (առգրավում, արգելանք, հարկային գրավ/հիփոթեք), այնուհետև կարող եք մուտքագրել հայտի գրանցման համարը, ընկերության

կամ անձի անունն ու գրանցման ամսաթիվը: Կարող եք ընտրել սպասարկման տիպը և հայտի կարգավիճակը: Այսպես նաև կարող եք ընտրել կամ չեղարկել հարկային գրավի որոշ առարկաներ:

- Երկրորդ որոնողական համակարգը կենտրոնացված է ընկերությունների և անհատների վրա: Կարող եք մուտքագրել ընկերության կամ անհատի անունը, նույնականացման կոդը կամ անձնական համարը, տալ գույքի նկարագիրն ու տեսնել բոլոր հնարավոր հայտերը:




Որոնման արդյունքում կստանանք ընդհանուր տեղեկատվություն այն մասին, թե ինչ տիպի պահանջ է ներկայացվել ռեեստրին և ինչպիսին է պահանջի արդյունքը: Ուշադրություն դարձրեք հայտի կարգավիճակին, այսինքն՝ ընդունվա՞ծ է, թե՝ ոչ գրանցման համար և ավարտվա՞ծ է, թե՝ ոչ գրանցումը: Դրանից հետո ուշադրություն պետք է դարձնեք սպասարկման տիպին: Օրինակ, եթե սպասարկումը վերաբերում է բռնագրավման չեղյալ համարելու պահանջին, որն ընդունվել է, իսկ գրանցումն ավարտվել է, սա նշանակում է, որ նշյալ գույքի նկատմամբ գրավ այլևս գրանցված չէ: Այսպես, նաև.

- Գրավի վերջնական կարգավիճակը տեսնելու համար բացեք «գրանցման ընթացակարգն ավարտվել է» անունով ֆայլը
- Տվյալների բազան նախ տալիս է վերջին արդյունքները:
- Տվյալների բազան չի տալիս անցյալին վերաբերող փաստաթուղթ այն

մասին, թե ինչու կատարվեց գույքի բռնագրավում կամ դրանից ազատում: Այն, պարզապես, ցույց է տալիս վերջին իրավական կարգավիճակը:

## Պարտապանների ռեեստր → www.debt.reestri.gov.ge

Այն ընկերություններն ու անձանց որոնելու համար, որոնք պետության նկատմամբ պարտք ունեն, այցելեք www.debt.reestri.gov.ge կայք: Կայքում տվյալները մատչելի են միայն վրացերեն լեզվով:

Կարող եք կիրառել որոնման երկու պարամետր.

• Անցեք «Անձի որոնումը պարտապանների ռեեստրում» բաժին՝ մուտքագրեք ընկերության կամ անձի անունը կամ նույնականացման կոդը/անձնական համարը: Եթե ընկերությունը կամ անձը համակարգում ամրագրվեց, դա կերևա արդյունքներում: Համակարգը միայն տալիս է տեղեկություն իրենում անձի ամրագրված լինելու մասին, ինչպես նաև տալիս է անձնական համարը: Նա չի տրամադրում որևէ մանրամասն տեղեկատվություն պարտքի մասին:

• Անցեք «Քաղվածքի և տեղեկանքի պատրաստման դիմումներ» բաժին՝ Այս բաժնին են դիմում ընկերություններն իրենց վիճակի մասին տեղեկանք ստանալու համար, այսինքն՝ հաշվառվա՞ծ են իրենք, թե՝ ոչ պարտապանների ռեեստրում:

## Քաղաքական միավորումների ռեեստր →napr.gov.ge

Հանրային ռեեստրի առաջին էջից մատչելի է քաղաքական միավորումների ռեեստրը: Այստեղ կհանդիպի «Գտի՛ր քաղաքական միավորումը» բաժինը, որտեղ Excel ֆորմատով ներբեռնած է «Քաղաքական միավորումների ռեեստրը» (ֆայլ՝ «Քաղաքական միավորումներ»): Հնարավոր է ներբեռնել այդ ֆայլերը: .




# Ընտրական տվյալների առցանց հարթակներ

## Կենտրոնական ընտրական հանձնաժողով →results.cec.gov.ge

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքն է result.cec.gov.ge-ն, որը նկարագրում է մոտակա ընտությունների արդյունքները և ընդգրկում է բոլոր ընտրատեղամասերի արձանագրությունները:

- Էջի սկզբում տեղադրված ցուցակից կարող եք ընտրել ձեր ցանկացած ընտրատարածքը:
- Աղյունքները ցույց տվող գրաֆիկի ներքևում գրված է. «Ամփոփիչ արձանագրություն», որն ապահովում է տվյալների մատչելիությունն ըստ ընտրատեղամասերի:
- Արձանագրության վրա սեղմելով կբացվի կոնկրետ տեղամասի արդյունքներն արտահայտող և սկաներացված փաստաթուղթ, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

## Կենտրոնական ընտրական հանձնաժողով →voters.cec.gov.ge

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների բազան՝ www.voters.cec.gov.ge -ն, ստեղծվեց այն պատճառով, որ ընտրողը կարողանա ստուգել, թե կա՞ ինքը ընտրողների ցուցակում: Նշված տվյալների բազան հնարավոր է օգտագործել

ուսումնասիրությունների համար: Դրա օգնությամբ կարող եք ճշտել այն անձանց ցուցակը, ովքեր գրանցված են միևնույն հասցեում: Այդ տվյալները կօգնեն, եթե.

- Ցանկանում եք որոշել անձի բիզնես-հետաքրքրությունները, նշված հարթակի կիրառմամբ կարող եք տեղեկանալ, թե ովքե՞ր են այս կամ այն անձի ընտանիքի անդամները, որպեսզի հետագայում ստուգեք նրանց ակտիվները:
- Ցանկանում եք ստուգել, թե կոնկրետ պետական պաշտոնյան արդյոք իր կամ իր ընտանիքի յուրաքնչյուր անդամի սեփականության տակ գտնվող բոլո՞ր ակտիվներն է նշել գույքային հայտարարագրում:

Նշվածները պարզելու համար պետք է մուտք գործեք տվյալների բազա և որոնում իրականացնեք անձի ազգանունով և անձնական համարով: Արդյունքը դուրս կբերի իր և իր ընտանիքի անդամների հասցեն:

**Ինչպե՞ս գտնենք անձնական համարը:**

1. Մուտք գործեք www.companyinfo.ge կայքը և գտեք անձին: Եթե նրա սեփականության ներքո երբեմն եղել է ընկերություն, կամ եթե նա որևէ ընկերության տնօրեն է եղել, տվյալների բազան ցույց կտա այդ անձի պրոֆիլն իր անձնական համարով:

2. Մուտք գործել www.napr.gov.ge կայքը և գտնել նրա անշարժ գույքը: Դրա համար պետք է սեղմեք անշարժ գույքի մանրամասն որոնման բաժինը: Եթե նշյալ անձի անվամբ գրանցված է որևէ բան, համակարգը ցույց կտա նրա մասին գոյություն ունեցող տվյալները, ընդ որում՝ անձնական համարը:

Հազվադեպ է պատահում, որ մեզ հետաքրքրող անձը կապված չէ ոչ մի ընկերության հետ և չի տիրապետում հողի: Նման դեպքում միակ բանը, ինչը կարող է գործել, այն է, որ Google-ի որոնման համակարգ մուտքագրեք նրա ազգն ու անունն այն հույսով, որ հայտնաբերեք այդ անձի ազգը, անունն ու անձնական համարը պարունակող որևէ փաստաթուղթ:

Անձի անձնական համարն իմանալուց հետո մտեք ընտրողների ցուցակ (www.voters.cec.gov.ge) և որոնման դաշտ մուտքագրեք նրա էջն ու անձնական համարը: Արդյունքը ցույց կտա նրա հասցեն և նույն հասցեում գրանցված այլ անձանց: Պետական պաշտոնյայի դեպքում, եթե պարզվեց, որ նրա ընտանիքի անդամներն ու նրանց ակտիվները նշված չեն գույքային հայտարարագրում, այնժամ բացարձակ իրավունք կունենաք հարց բարձրացնել այն մասին, որ այդ

պետական պաշտոնյան դիտավորյալ թաքցրել է այդ տեղեկատվությունը:

| |
|---|
| Ծանոթագրություն.<br>Գյուղի յուրաքանչյուր բնակիչ գրանցված է միևնույն հասցեով: Որոշ դեպքերում տարբեր ընտանիքներ քաղաքում էլ կարող է գրանցված լինեն նույն հասցեով (օրինակ՝ այդպես կոչված՝ «իտալական բակում»): |

## Զամփսթարք→Mashasada.me

www.mashasada.me-ը «Զամփսթարքի» կողմից կազմած տվյալների առցանց բազա է, որը հիմնված է 2012 թվականի ընտրողների ցուցակի վրա: Անվան նշման արդյունքում համակարգը ցույց կտա ողջ երկրի մասշտաբով անվան հետ կապված վիճակագրությունը, օրինակ՝ այդ անունը կրող մարդկանց քանակը, նրանց ծննդյան թվականն ու այն, թե որ տարածաշրջանում են գրանցված:
Սա անհրաժեշտ որոնողական միջոց է, երբ կասկածում եք, թե միևնուն անունը կրող երկու անձ, փաստորեն, միևնույն անձնավորությունը կարող են լինել: Օրինակ, եթե կհայտնաբերեք երկու անձանց, որոնք նույն անունն ունեն և գիտեք նրանցից մեկի ծննդյան ամսաթիվը, mashasada.me-ը կօգնի պարզել, թե քանի մարդ է ծնվել նշված թվականին, նշյալ անունով: Ի նկատի ունեցեք, որ կայքն ընդգրկում է 2012 թվականին ընտրացուցակ մտած ընտրողների անունները (այսինքն, այն անձանց անունները, որոնց տարիքը 2012 թվականին 18 տարեկանից բարձր էր):

# Իրավաբանական տվյալների բազաներ

## Վրաստանի օրենսդրական լրատու →matsne.gov.ge

Հանրային իրավունքի իրավաբանական անձ «Վրաստանի օրենսդրական լրատուի» www.matsne.gov.ge կայք էջում հնարավոր է գտնել օրենքներ և այլ նորմատիվ ակտեր:

| |
|---|
| Ծանոթագրություն.<br>Որոշ փաստաթղթերի վերջնական տարբերակը տեսնելը վճարովի է, թեև փաստաթղթերի մեծամասնությունը մատչելի է բոլոր սպառողների համար: |

Որոնումն իրականացվում է առաջին էջում տեղադրած որոնողական համակարգի միջոցով:




Որոնումն իրականացվում է հետևյալ դաշտերի ցանկացած համադրության կիրառմամբ (դրանց նկարագիրը տրված է կայք էջի որոնման հրահանգում, ինչը ներկայացնում ենք անփոփոխ)։

**Որոնման բառը/արտահայտությունը**

Այս դաշտում պետք է գրվի այն բառը կամ բառի մասը (օրինակ՝ ադմինիստ) կամ արտահայտությունը (օրինակ՝ ադմինիստրատիվ իրավական դաշտ), որի միջոցով որոնում ենք փաստաթուղթը։ Այսպես նաև հնարավոր է գտնել արտահայտությունը երկու ոչ լրիվ բառով, որի ժամանակ պետք է կիրառվի «+» նշանը (օրինակ՝ ադմին + իրավ)։ Նման դեպքում ծրագիրը կգտնի այն փաստաթղթերը, որոնցում երկու բառն էլ կա։

**Փաստաթղթերի ֆիլտր**

Դա ընտրովի դաշտ է, որը հնարավորություն է տալիս ընտրելու, թե որ փաստաթղթում իրականացնել որոնումը։ Որոնումն իրականացնելիս ծրագիրը նախ փնտրում է մեր ընտրած բառը/արտահայտությունը միայն հիմնական (օրինակարգված) փաստաթղթերում, սակայն, եթե մենք ուզում ենք գտնել նաև որոշակի փոփոխության փաստաթուղթ կամ այլևայլ տեղեկատվական փաստաթղթեր, այդ դեպքում պետք է ընտրենք «բոլոր փաստաթղթերը» որոնումը։

**Փաստաթղթի տիպը**

Դա ընտրովի դաշտ է, որտեղ կարող ենք ընտրել, թե ինչ տիպի փաստաթուղթ ենք փնտրում (օրինակ՝ օրենք, հրաման և այլն...)։
Փաստաթուղթ ընդունող.

Դաշտում հավաքենք մեր ընտրած ընդունողի անունը կամ նրա անվան ցանկացած մասը և ծրագիրն ինքը կառաջարկի եղած ընդունողներին: Որքան ավելի շատ տառ հավաքենք, այնքան ավելի կնվազի ընդունողների ընտրության միջակայքը:

Այն դեպքում, եթե մենք ընտրել ենք փաստաթղթի տիպը, որպես փաստաթուղթ ընդունող կհայտնվի միայն այն ընդունողը, որն ունի համապատասխան փաստաթուղթն ընդունելու իրավունք (օրինակ, հրամանագրեր տիպն ընտրելիս, ընդունողի դաշտում կերևա միայն Վրաստանի նախագահը):

**Որոնման չափանիշներ (բառ/արտահայտություն որոնել).**
**Նշյալ դաշտը հնարավորություն է տալիս համակարգ մուտքագրել որոնման հետևյալ չափանիշները.**

*Միայն վերնագիրը*՝ այս չափանիշն ընտրելիս ծրագիրը կորոնի փաստաթուղթ, որի վերնագրում կիրառված է մեր կողմից նշված բառը/արտահայտությունը:
*Փաստաթղթի տեքստը*՝ այդ չափանիշն ընտրելիս ծրագիրը կորոնի փաստաթուղթ որի տեքստում, ընդ որում վերնագրում կիրառված է մեր կողմից նշված բառը/արտահայտությունը:

*Ընդլայնված*՝ ընդլայնված որոնման դաշտը առաջարկում է որոնման ճկուն և կայուն մեխանիզմ: Այս դաշտում պետք է գրենք հատուկ օրենքներով կազմած որոնման տող: Եթե այդ դաշտում հավաքենք մի քանի բառ, այնժամ կգտնվեն բոլոր այն փաստաթղթերը, որոնք պարունակում է թեկուզ մեկ որոնման բառ: Եթե ցանկանում ենք որոնել կոնկրետ արտահայտություն պարունակող տեքստ, դաշտում պետք է հավաքենք այդ արտահայտությունն ու դնենք չակերտների մեջ, օրինակ, «նախադպրոցական տարիք»: Եթե այդ արտահայտությունը չտեղավորենք չակերտների մեջ, այնժամ կայքը կորոնի բոլոր այն փաստաթղթերը, որոնք պարունակում են «նախադպրոցական» կամ «տարիք» բառերը, իսկ այժմ, կորոնի միայն այն փաստաթղթերը, որոնք պարունակում են «նախադպրոցական տարիք» ամբողջական արտահայտությունը:
*Որոնում կաղապարով*՝ եթե որոնման դաշտում գրենք հայ? և սեղմենք որոնում, կայքը կգտնի բոլոր այն փաստաթղթերը, որոնք պարունակում են հետևյալ տիպի բառեր՝ հայր Հայք, Հայկ, հայտ հայց ..., այսինքն ? սիմվոլը նշանակում է ցանկացած տառ: Այլ բառերով ասած, հարցական նշանի փոխարեն կայքը ենթադրում է մեկ ցանկացած սիմվոլ: Հնարավոր է այդ սիմվոլի մի քանի անգամ կիրառում, օրինակ,

«կար?ի? համապատասխանում է հետևյալ տիպի բառերին՝ կարգին, կարկին, կարմիր, կարծիք,..., հատկանշական է, որ չի կարելի այդ սիմվոլը կիրառել բառի առաջին տառի փոխաեն: Այսպես նաև, հատուկ իմաստ ունի * սիմվոլը: Նրա փոխարեն կայքը ենթադրում է մի քանի ցանկացած տառ: Օրինակ, եթե որոնման դաշտում հավաքենք ար*ական, կայքը կգտնի բոլոր այն փաստաթղթերը, որոնք պարունակում են հետևյալ տիպի բառեր՝ արդիական, արյունակցական, արդյունաբերական, արտադասարանական, արտադրական, արմատական, ...
Հատկանշական է, որ * սիմվոլը չի կարելի կիրառել բառասկզբում:

*Որոնում առաջնահերթությամբ*՝ հաճախակի են դեպքերը, երբ հիշում ենք որոնման փաստաթղթի մի քանի բառ, միևնույն ժամանակ համոզված ենք որոշ բառերի գոյության մեջ, իսկ որոշ բառերի գոյությանը կասկածում ենք: Օրինակ, գիտենք, որ որոնում ենք փաստաթուղթ, որում, գրեթե համոզված ենք, որ կհանդիպի «դպրոց» բառը, ինչպես նաև կարող է լինել «նստարան» բառը: Որոնելիս, բնականաբար, նախընտրելի է դեռ քննարկել այն փաստաթղթերը, որոնցում կիրառված է «դպրոց» բառը, և եթե այնտեղ չգտանք ցանկալի օրենքը, այնժամ անցնենք «նստարան» պարունակող փաստաթղթերին: Եթե կիրառենք «Առաջնահերթությամբ որոնման» մեթոդը, այնժամ կայքը գտած փաստաթղթերը կդասավորի այն կերպ, որ սկզբում դուրս գան այն փաստաթղթերը, որոնք իսկապես պարունակում են «դպրոց» բառը և ապա միայն՝ այլ փաստաթղթեր: Դրա համար կարող ենք որոնման դաշտում գրել հետևյալ տողը՝ դպրոց^2 նստարան: Այս գրառման կառուցվածքը՝ ^2, կայքին կթելադրի, որ 2 անգամ ավելի վստահ ենք, որ (նստարան բառի հետ համեմատած) որոնվող փաստաթղթում կիրառված է դպրոց բառը, քանի որ «նստարան» բառը սիմվոլ չունի, ինքնաբերաբար ենթադրվում է, որ վստահության աստիճանը հավասար է 1–ի: Վստահության աստիճանը 1-ից բարձր պետք է լինի: Վստահության աստիճան կարող ենք վերագրել նաև արտահայտությանը, հիշեցնում ենք, որ, արտահայտությունը պետք է դնենք չակերտների մեջ:

*Տրամաբանական օպերատորներ*՝ բերենք այսպիսի օրինակ. Ենթադրենք, հիշում ենք, որ որոնվող փաստաթղթում օգտագործված էր վերանորոգում բառը և հիշում ենք նաև, որ գործածված էր ավտոմոբիլ կամ մեքենա բառը: Նման փաստաթուղթ գտնելու համար կարող ենք կիրառել տրամաբանական օպերատոր OR-ը և տրամաբանական օպերատոր AND-ը: Որոնման դաշտում պետք է գրենք՝ վերանորոգում AND (ավտոմոբիլ OR մեքենա):Այլ կերպ ասած, AND օպերատորը պետք կիրառենք այնժամ, երբ փաստաթղթում միաժամանակ հանդիպում է երկու որոնվող բառ, իսկ OR օպերատորն այն ժամանակ, երբ մեկնումեկն է կիրառված փաստաթղթի մեջ:

Տրամաբանական կառույցներ ստեղծելիս թույլատրելի է կիրառել չակերտներ և դրանք ընկալվում են նույն կերպ, ինչպես դա կիրառվում է մաթեմատիկական ֆորմուլաների մեջ: Տրամաբանական օպերատոր +-ը գրվում է բառասկզբում և ցույց է տալիս կայք, որը որոնում է այնպիսի փաստաթղթեր, որոնց մեջ անպայման մտնում է որոնվող բառը: Օրինակ + **ակցիզ տուգանք**, կգտնի այնպիսի փաստաթուղթ, որտեղ հաստատ կա ակցիզ բառը և կարող է հանդիպել (կարող է չլինել) տուգանք բառը: NOT տրամաբանական օպերատորը (նույն - -ը) կարող է գրվել բառերի կամ արտահայտությունների միջև և նշանակել այն, որ որոնվող փաստաթղթում պետք է լինի առաջին բառը/արտահայտությունը և միևնույն ժամանակ այն չպետք է ներառի օպերատորից հետո եղած բառը/արտահայտությունը: Օրինակ, **դրսևորում** NOT **արտոնված**, կգտնի այնպիսի փաստաթուղթ, որտեղ կհանդիպի դրսևորում բառը և չի հանդիպի արտոնված բառը:
Որոնումն ունի նաև ըստ փաստաթղթի համարի և ընդունման ամսաթվի որոնման հնարավորություն և ընդլայնված որոնման դաշտեր, որտեղ մեզ հնարավորություն է տրվում գտնել փաստաթուղթը լրացուցիչ պարամետրերով՝ գրանցման կոդ, հրապարակման ամսաթիվ և տարբեր ստատուսներ:

### Վրաստանի խորհրդարանը → parliament.ge

Օրինագծերի որոնումը հնարավոր է խորհրդարանի կայք էջում, «օրենսդրություն» բաժնում → որոնիր օրենսդրություն: Կբացվի նոր կայք էջ, որտեղ հնարավոր է որոնել խորհրդարանի կողմից ընդունած փաստաթղթերը (օրենքներ, որոշումներ, հայտարարություններ):




Կարելի է որոնումն իրականացնել որոնման դաշտում տեքստ մուտքագրելու միջոցով կամ սեղմեք ստեղնաշարի նշանը, որից հետո կբացվի պատուհան, որտեղ հնարավոր է մանրակրկիտ որոնում: Յուրաքանչյուր փաստաթղթի համար նշված է գրանցման համարը, ամսաթիվը, օրինագծի անվանումը, նախաձեռնողը, տիպն ու կարգավիճակը: Կարգավիճակները նշված են տարբեր գույներով:

Համապատասխան փաստաթուղթը գտնելուց հետո նրա վրա երկու անգամ սեղմելու դեպքում հասանելի կլինի մանրամասն տեղեկատվությունը:



Ձախ դաշտում տրված է օրինագծի/երի (Օրենսդրական փաթեթի դեպքում) անվանումները, նախաձեռնողի և հեղինակի ինքնությունը, ներկայացնելու ամսաթիվը:

Կենտրոնական դաշտում տրված են օրինագծի տարբեր էտապները (հարուցումից ընդունում): Ըստ այնմ, թե որ փաստաթուղթը կընտրեք, աջ դաշտում կբացվեն համապատասխան տվյալներ: Օրինակ, հարուցված տարբերակում տրված է այդ տարբերակի քննարկման ամսաթիվը, հանձնաժողովների անվանումը, որոնք պետք է քննարկեն նախագիծը, ֆայլերում ներբեռնած է օրենքի հարուցված տարբերակը, բացատրական քարտեր, քաղվածք հանձնաժողովի նիստի արձանագրությունից և այլն: Իսկ եթե դաշտի կենտրոնում ընտրենք I ունկնդրում, աջ դաշտում կտեղադրվեն արդեն այդ ունկնդրմանը համապատախան տվյալներ և ֆայլեր:

| |
|---|
| Ծանոթագրություն.<br>Ուշադրություն դարձրեք «ֆայլեր» բաժնին: Այստեղ ներբեռնած է բավականին հետաքրքիր փաստաթղթեր, այդ թվում, հանձնաժողովի որոշումների և քվեարկության արդյունքները: |

**Վրաստանի իշխանություն, Վրաստանի նախագահ → Government.gov.ge and president.gov.ge**

Վարչապետ – նախարարի հրամանները մատչելի են իշխանության www.government.gov.ge կայքում, «վարչապետ» բաժնում → հրամաններ: Այս բաժինը չունի որոնման համակարգ, ինչը բարդացնում է տեղեկատվության որոնումը: www.president.gov.ge– -ում՝ «մամուլ» բաժնում, մատչելի են նաև նախագահի կողմից հրապարակած իրավական ակտերը: Որոնման համակարգ չկա նաև այս կայք էջում:

## Վրաստանի հաղորդակցության ազգային հանձնաժողովի տվյալներ

**Տեղեկատվություն հեռուստահաղորդակցական ընկերությունների մասին → www.gncc.ge**

Վրաստանի հաղորդակցության ազգային հանձնաժողովի պաշտոնական

www.gncc.ge կայք էջում, «Հեռարձակող» կատեգորիայում զետեղված են հեռուստատեսության և ռադիոյի համապատասխանության դեկլարացիաները, որտեղ կարելի է ձեռք բերել տեղեկատվություն այդ ընկերությունների սեփականատերերի և տնօրենների մասին: Թվարկածներից պետք է ընտրեք համապատասխան հեռարձակողը կամ ներքևում զետեղված որոնման դաշտում նշեք հեռարձակողը: Սեղմեք «որոնում» կոճակը: PDF ֆայլի ֆորմատով տրված է համապատասխանության դեկլարացիան:

**Գերատեսչական ռեեստր → www.gncc.ge**

Հաղորդակցության ազգային հանձնաժողովի պաշտոնական կայք էջից մատչելի է գերատեսչական ռեեստրը (բաժինը զետեղված է առաջին էջի վերջում): Ռեեստրում տեղադրված է հեռուստահաղորդակցական ոլորտում գործող ընկերությունների կոնտակտային տվյալները:

**Վերլուծական հարթակ → www.analytics.gncc.ge**

Հաղորդակցության ազգային հանձնաժողովի վերլուծական հարթակը՝ www.analytics.gncc.ge-ն, պարունակում է հետաքրքիր տվյալներ հեռուստահաղորդակցական ոլորտի մասին: Բոլոր տվյալները տեսնելու համար սպառողը պետք է գրանցվի կայքում:

Վերլուծական պորտալում զետեղված է տեղեկատվություն հեռուստահաղորդակցական ոլորտի տարբեր սեգմենտների վերաբերյալ՝ մոբիլային շուկա, հեռարձակում, համացանց, տեղափոխում և այլն:
Յուրաքանչյուր բաժնում կարող եք կազմել ձեզ համար ցանկալի գրաֆիկ, որն արտահայտում է շուկայում գոյություն ունեցող վիճակը: Ձախ գոտուց կարող եք ընտրել «տվյալների դուրս բերում» ըստ տեխնոլոգիաների, եկամուտի կամ այլ պարամետրերի: Գրաֆիկից վերև զետեղված են լրացուցիչ ֆիլտրեր (ամսաթիվ, առանձին կամ ընդհանուր տվյալներ և այլն): Հնարավոր է տվյալների արտահանում:

## Առնտրային բանկերի օգտատիրական սեփականություն → www.nbg.gov.ge

Բոլոր բանկերը պարտավոր են Վրաստանի ազգային բանկին ներկայացնել

հաշվետվություն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, որի մեջ մտցված կլինեն հիմնական ֆինանսական տվյալներ և տեղեկատվություն դրանց կառավարման, խորհրդի, անմիջական սեփականատիրոջ և օգտատիրական սեփականատերերի, այսինքն՝ բանկի իսկական սեփականատերերի մասին:

Առևտրային բանկի սեփականատերերին փնտրելու համար մուտք գործեք www.nbg.gov.ge կայքը, Այնուհետև սեղմեք → «ֆինանսական կայունություն» և ապա՝ «առևտրային բանկերի ֆինանսական տվյալներ»: Արդյունքում կհայտնվի էջ, որի վրա դասավորած են Excel ֆայլեր (1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների հաշվետվության համար՝ յուրաքանչյուրը ընդգրկում է եռամսյա ժամանակահատված) և PDF ֆայլեր (4-րդ եռամսյակի հաշվետվությունը, որն ընդգրկում է աուդիտի ողջ տարվա հաշվետվությունը) պարունակող հղումներ յուրաքանչյուր եռամսյակի համար սկսած 2006 թվականից: Երբեմն կայքի վրա զետեղված չէ որոշ բանկերի հաշվետվություն: Դրա պատճառը, սովորաբար, այն է, որ այդ բանկերը այս կամ այն ժամանակահատվածում չէին գործում:

Ներկայացնում ենք մի քանի հուշում, ինչը կհեշտացնի որոնումը.

- Որպես օրենք, Excel ֆայլերում սեփականության մասին տեղեկատվությունը զետեղված է վերջին էջում: Երբեմն Excel ֆայլի ներբեռնումից հետո չի կատարվում շրիֆտի ընկալում և հնարավոր է դժվարանաք կարդալ ֆայլը: Այս խնդիրը լուծելու համար ներբեռնեք հետևյալ շրիֆտները. Geo-Arial կամ՝ Geo-times;
- Excel էջերը մատչելի են ինչպես վրացերեն, այնպես էլ անգլերեն լեզուներով:

## Դատական որոշումներ

### Սահմանադրական դատարան → www.constcourt.ge

Սահմանադրական դատարանի որոշումները տրված են սահմանադրական դատարանի կայք էջում (www.constcourt.ge)՝ «դատարանական ակտեր» բաժնում: Այստեղ մատչելի են նաև դատավճիռներն ու արձանագրությունները: Ի նկատի ունեցեք, որ որոշումը դատարանի կողմից կայացված վերջնական դատավճիռն է, իսկ դատավճիռը դատարանի կողմից կայացված ցանկացած վճիռն է, որը կարող է լինել

վերջինը և կայացվել դատավարության տարբեր էտապներում:
Որոշումների/վճիռների ֆիլտրացումը հնարավոր է մի քանի պարամետրերով՝ ամսաթիվ, գրանցման համար, անուն, հայցվորի անուն, պատասխանող կողմի անուն, վեճի առարկա: Ցանկալի չափանիշները մուտքագրելուց հետո սեղմեք «որոնում» կոճակը և համակարգը ցույց կտա գործը կամ գործերի ցուցակը: Սեղմելով յուրաքանչյուր գործի վրա նրա մասին կստանաք ընդհանուր տեղեկություն: Հնարավոր է ներբեռնել լրիվ տարբերակը:

## Գերագույն դատարան → www.supremecourt.ge

Վրաստանի գերագույն դատարանի (www.supremecourt.ge) կայք էջում մատչելի է դատական որոշումների որոնողական համակարգը: Առաջին էջում պետք է սեղմեք «որոշումների որոնման համակարգ» բաժինը, այնուհետև՝ «որոնիր որոշում» գրառումը:

Համակարգին կցված է սպառողի ձեռնարկ, որը ներկայացնում ենք անփոփոխ կերպով:

Վրաստանի գերագույն դատարանի որոշումների որոնողական համակարգը բացվում է որոնմամբ, որում տրված է քրեական և քաղաքացիական գործերն ընտրող կոճակները և որոնման պարամետրերը՝ գործի համարը, ժամանակահատվածը, բողոքի տեսքը, գործի քննարկման արդյունքը,տեքստում որոշում փնտրելու երեք դաշտ: Քաղաքացիական և վարչական որոշումների որոնումը հնարավոր է նաև ըստ վեճի կարգավիճակի և տեսակների: Որոնման պարամետրերից հնարավոր է ընտրել ցանկացած համադրություն: Որոշումների լրիվ տեքստում հնարավոր է որոնել երեք արտահայտությամբ, որոնց համար կիրառվում է երեք դաշտ: Որոնվող արտահայտությունները պետք է գրվեն դաշտերում առանձին-առանձին և այդ դեպքում կգտնվեն այն որոշումները, որոնց տեքստերում միաժամանակ կա երեք արտահայտությունն էլ: Որոնման արդյունքները բարելավելու համար կարելի է յուրաքանչյուր դաշտում գրել մի քանի արտահայտություն:
Այդ դեպքում դաշտում որոնողական արտահայտությունները պետք է միմյանցից առանձնացնենք „@“ սիմվոլով: Դաշտում այդպիսի հատվածների քանակը սահմանափակ չէ: Որոնման արդյունքներում ի հայտ կգան այն որոնումները, որոնց տեքստերում կան լրացված դաշտերից թեկուզև մեկ արտահայտություն: Օրինակ, եթե լրացնենք երկու դաշտ և յուրաքանչյուրում գրենք երեք-երեք արտահայտություն

(և միմյանցից առանձնացնենք «@» սիմվոլով), որոնման արդյունքում կհայտնվեն այն որոշումները, որոնք պարունակում են առաջին դաշտի թեկուզ մեկ արտահայտություն և երկրորդ դաշտի թեկուզ մեկ արտահայտություն:
Որոնման պարամետրերը մուտքագրելուց հետո սեղմում ենք որոնման կոճակը, որից հետո էկրանի վրա կհայտնվի տվյալների բազայում գոյություն ունեցող այն որոշումների ռեեստրը, որը բավարարում է ընտրած որոնողական պարամետրերին: Ռեեստրը կարող եք զննել «հաջորդ էջ» և «նախորդ էջ» կոճակների օգնությամբ: «Որոնման շարունակություն» կոճակը կիրառվում է որոնման պարամետրերի հետագա կոնկրետացման համար: Որպեսզի մանրամանորեն զննենք կոնկրետ որոշումը, պետք ընտրենք «Ընդարձակ» կոճակը:
Դրանից հետո կբացվի որոշման տեքստը: «Նախորդ» և «հաջորդ» կոճակներով կարող ենք զննել որոշումների տեքստը: «Հետ» կոճակը կվերադարձնի որոնվող որոշումների ռեեստր, որտեղ ունենք որոնման պարամետրերի ճշտման («որոնման շարունակում» կոճակ) կամ որոնում վերադառնալու («նոր որոնում» կոճակ) հնարավորություն:

## Թբիլիսիի քաղաքային դատարանի գործեր → www.tcc.gov.ge

Թբիլիսիի քաղաքային դատարանի կայք էջում տեղադրված է ընդհանուր տեղեկատվություն քննարկման ընթացքում գտնվող գործերի վերաբերյալ: Դրանք կարող եք տեսնել քաղաքային դատարանի կայք էջի (www.tcc.gov.ge) գլխավոր էջում «ընթացիկ գործեր» հղումը սեղմելով: Կարող եք ընտրել քրեական, քաղաքացիական և վարչական գործերի կատեգորիա: Թվարկածներում նշված է գործի քննարկման ժամանակը, դատավորի անունը, կողմերը, դահլիճի համարը:

Թվարկման սկզբում զետեղված են ֆիլտրեր՝ որոնման ժամանակ նավիգացիայի (տեղորոշման) համար: Գործերը կարող եք ֆիլտրել ըստ ամսաթվի: Օրինակ, որպես սկսելու ամսաթիվ կարող եք նշել ընթացիկ ամսաթիվը և համակարգում կերևան վերջին մի քանի օրվա համար պլանավորած նիստերը: Կարող եք նաև գտնել, թե ինչ գործեր է քննարկել կոնկրետ դատավորը կամ որոնում իրականացնել ըստ կողմերի:

## Տվյալներ ընդհանուր դատարանների մասին → *www.geocourts.ge*

Վրաստանի ընդհանուր դատարանների որոշակի փաստաթղթերի մատչելիությունն

ապահովում է կառավարության www.geocourts.ge կայքը: Կայքը մշակված է որպես դատարանի ծանուցումների հանրային տարածման միջոց այն դեպքերի համար, երբ հայտնի չէ կողմի գտնվելու վայրը կամ անհնար է կողմին ուղարկել ծանուցում հաղորդակցման տարբեր միջոցներով: Փաստաթղթերի ֆիլտրում հնարավոր է ըստ կայք էջում զետեղած տարբեր պարամետրերի, դատարանի հաղորդագրության տիպի վրա սեղմելիս կհայտնվեն փաստաթղթերը, որոնք կարող եք ներբեռնել:

## Բյուջետային տվյալներ

### Պետական բյուջե → www.mof.gov.ge

Ֆինանսների նախարարության կայքը (www.mof.gov.ge) ներառում է «բյուջե» բաժինը, որտեղ հավաքված է պետական բյուջեի տվյալներն ու զննական նյութերը: Կայքում բացվում է գրաֆիկ, որն արտահայտում է պետական բյուջեի դինամիկան սկսած 2002 թվականից: Յուրաքանչյուր տարուց հետո փոքրատառ «փ» տառը նշանակում է «փաստ», «գ» տառը համապատասխանում է «գեզմա» (պլան) բառին, իսկ «պ» տառը՝ «պրոեկտ» (նախագիծ) բառին:

Բյուջեի մասին ավելի շատ տեղեկատվություն ստանալու համար կարող եք ընտրել ցանկալի պարամետրը: Ուշադրություն դարձրեք մի քանի հիմնական փաստաթղթի.

- **Բյուջեի վերլուծական տվյալները**.
  Այդ բաժինը ներառում է ՀՆԱ աճի դինամիկան, բյուջեի պակասորդը, գնաճը, համախմբված բյուջեն (ի տարբերություն պետական բյուջեի, համախմբված բյուջեն ներառում է տեղական ինքնակառավարման բյուջեները), և պետական բյուջեն արտահայտող աղյուսակներ:
- Աղյուսակները ցույց են տալիս երկրի տնտեսական զարգացումը վերջին տաս տարիների ընթացքում և դա ամենակարևոր և հեշտությանբ ընկալվող տվյալներն են Վրաստանի տնտեսության վերաբերյալ ընդհանուր գաղափար կազմելու համար:
- BDD (հիմնական տվյալներ և ուղղություններ)՝ Այս բաժինը ներառում է փաստաթղթեր (PDF ֆորմատում), որոնք նկարագրում են իշխանության պլանները բյուջեի ծախսման հարցում: Ամենավերջին փաստաթուղթը վերաբերում է 201-2019 թվականներին: Դա բյուջեի ծախսման հաջորդ մի քանի տարվա համար նախատեսած ընդհանուր հաշվարկ է: Կանխատեսումն իրական բյուջեին հնարավոր է բոլորովին չհամընկնի:

- **Պետական բյուջե.**
  Այս բաժինն ունի երկու ենթաբաժին՝ պետական բյուջե և կատարման հաշվարկում:
- Պետական բյուջեի ենթաբաժնից մատչելի է «Պետական բյուջեի մասին օրենքը»:
  - Բյուջեի մասին օրենքում ամենից կարևոր տեղեկատվությունը զետեղված է 1, 2 և 6 գլուխներում:
- Կատարման հաշվարկում ենթաբաժինը ներառում է բյուջեի կատարման եռամսյակային հաշվարկներ: Սեղմեք տարեթիվը, այնուհետև՝ եռամսյակը և կտեսնեք համապատասխան հաշվարկումը:
- Բյուջետային օրացույց. Այս բաժնում կտեսնեք օրացույց, իսկ երբ կուրսորը տանենք կոնկրետ ամսաթվի վրա, ի հայտ կգա տեքստ, որը նկարագրում է այդ օրվա ընթացքում տեղի ունեցած բյուջեի հետ կապված իրադարձությունները՝ բյուջեի նախագծի ներկայացնելը խորհրդարան, նիստ և այլն: Այստեղ կարող եք հետևել բյուջեի զարգացման գործընթացին ողջ տարվա ընթացքում:
- Քաղաքացու ուղեցույց. Այստեղ ներբեռնած է PDF փաստաթուղթ 2016 թվականի բյուջեի վերաբերյալ, որտեղ պարզ ներկայացված է բյուջեի բովանդակությունը: Ցանկալի է, որ այս փաստաթղթի հետ ծանոթանան այն մարդիկ, ովքեր նվազ են կողմնորոշվում բյուջետային հարցերում:

## Պետական պարտք → www.mof.gov.ge

Պետական պարտքի վերաբերյալ գոյություն ունեցող վիճակագրությունը նույնպես զետեղված է Ֆինանսների նախարարության կայք էջում (www.mof.gov.ge): Մուտք գործեք առաջին էջի «պետական պարտք» բաժանմունքը:

## Տեղական ինքնակառավարման բյուջեներ

Տեղական մունիցիպալիտետների բյուջեները ներկայացնում են թեմական ժողովների որոշումները և դրանք կարելի է տեսնել www.matsne.gov.ge կայքում: Սակայն այդ կայքում բյուջեների ամենավերջին տարբերակները (համախմբված տարբերակը) անվճար մատչելի չէ:

## Եկամուտների ծառայության տվյալներ

### Հարկային զիջումներից օգտվողների ռեեստր → www.rs.ge

Եկամուտների ծառայության կայք էջում (www.rs.ge) թվարկված է նախագծեր և կազմակերպություններ, որոնք միջազգային պայմանագրերի հիման վրա ազատվում են որոշակի հարկերից: Սա, հիմնականում, ներառում է նախագծեր, որոնք ֆինանսավորված են արտասահմանյան պետական կազմակերպությունների կողմից և որոնք իրականացնում են պետական օրգանները կամ ոչ առևտրային կազմակերպությունները:
Ցանկը մտնելու համար այցելեք «Եկամուտների ծառայության» կայք (www.rs.ge) և «Սերվիսներ» կատեգորիայից ընտրեք «Հարկային զիջումներից օգտվողների ռեեստր»: Թվարկման մեջ տրված են միջազգային պայմանագրերի անվանումը, որի վրա հիմնված է հարկային զիջումը, նախագծի անվանումը, նախագիծն իրականացնող կազմակերպության անվանումը և նույնականացման կոդը, նախագծի ժամկետները, այն հարկերի տեսակները, որոնցից ազատվում են (ԱԱՀ, ներմուծման հարկ, ակցիզային հարկ) նախագծի կարգավիճակը և նշումներ:
Կոնկրետ կազմակերպություն կամ նախագիծ որոնելու համար կիրառեք յուրաքանչյուր սյունակի վերևի մասում (վերնագրերի ներքևում) գտնվող դատարկ դաշտերը: Օրինակ, կազմակերպությունների բաժնում հավաքեք «Միջազգային թափանցիկություն՝ Վրաստան» և համակարգը կտրամադրի բոլոր այն նախագծերը, որոնց մասնակցում է «Միջազգային թափանցիկություն՝ Վրաստանը»:

### Դրամախաղային բիզնեսի արտոնագրման ռեեստր Բարեգործական կազմակերպությունների ռեեստր → www.rs.ge

- Եկամուտների ծառայության կայք էջի գլխավոր էջից (www.rs.ge) անցեք «Օգտակար տեղեկատվություն» բաժանմունք, ընտրեք «Հարկային» ենթաբաժինը, այնուհետև՝ «Դրամախաղային բիզնեսի թույլատրման ռեեստր»: Կարող եք ըստ տրված պարամետրերի որոնել ընկերությունը:
- Եկամուտների ծառայության կայք էջի գլխավոր էջից (www.rs.ge) անցեք «Օգտակար տեղեկատվություն» բաժանմունք, ընտրեք «Հարկային» ենթաբաժինը, այնուհետև՝ «Բարեգործական կազմակերպությունների ռեեստր»: Կարող եք ըստ տրված պարամետրերի որոնել ընկերությունը:

**Ապրանքային կողերի ռեեստր →  www.rs.ge**

**Եկամուտների ծառայության կայք էջը (www.rs.ge)** ներառում է նաև գրանցված ինտելեկտուալ սեփականության ցուցակը:  Անցեք «օգտակար տեղեկատվություն» բաժին, այնուհետև՝ «մաքսային» բաժին, ընտրեք «ինտելեկտուալ սեփականություն» և սեղմեք «ռեեստր»:  Կարող եք ըստ տրված պարամետրերի որոնել տեղեկատվությունը:
**Ներմուծում-արտահանման տվյալներ  →www.rs.ge**
Եկամուտների ծառայության առաջին էջից ընտրեք  «վիճակագրական տվյալներ»: Կհասցեափոխվեք այլ էջ, որտեղ կարող եք ծանոթանալ եկամուտների և ներմուծում-արտահանման վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության:

ՈՒ՞մ է պատկանում ինտերնետ դոմենը:  **.GE դոմեն → www.registration.ge**

Վրաստանի ազգային .GE   դոմենի գրանցումը բացառապես իրականացնում է «Կավկասուս օնլայնը»: Տեղեկատվություն GE դոմենի կայք էջերի սեփականատերերի վերաբերյալ կարող եք ձեռք բերել  www.registration.ge  կայքում:

Մուտքագրեք դոմենի անունը կայք էջի վերևի մասում զետեղված որոնման վանդակում, որտեղ գրված է «ստուգեք ազատ դոմենը»:  Օրինակ, եթե հավաքեք «թափանցիկություն» բառը և սեղմեք «ստուգում» կոճակը, կայքը կտրամադրի «Միջազգային թափանցիկություն՝ Վրաստանի» կոնտակտային տվյալները կամ՝ transparency.ge դոմենի գրանցված սուբյեկտի անվանումը: Այդ ճանապարհով կարող եք հետևել կայք էջ ունեցող ընկերություններին, եթե տեղեկատվություն եք որոնում նրանց մասին:  Տեղեկատվությունը կարող է հնացած լինել:

**Միջազգային դոմեններ → www.domaintools.com**

www.domaintools.com –ը  իրենից ներկայացնում է միջոց, որը հնարավորություն է տալիս գտնել դոմենի վրա գրանցած անձանց և հոսթինգի (հյուրընկալման) տվյալները:   Գլխավոր էջում՝ որոնման դաշտում մուտքագրեք դոմենի անունը և կայքը կտրամադրի տեղեկատվություն կայքում գրանցված անձանց մասին, ինչպես նաև կայք էջի վերաբերյալ որոշակի վիճակագրական և ընդհանուր տեղեկատվություն:

## Ընդհանուր վիճակագրական տեղեկատվություն

### Սաքստատ → www.geostat.ge

«Սաքստատը» կառավարական հաստատություն է, որը պատասխանատու է վիճակագրական տեղեկատվության հավաքագրման և վերլուծության համար: (www.geostat.ge) կառավարական կայքը պարունակում է տարբեր վիճակագրական տվյալներ, որոնք գլխավոր էջից հեշտությամբ հասանելի են: Սեղմեք որևէ կատեգորիայի վրա և կտեսնեք համապատասխան թվարկումը:

### CRRC-ի հարցումների տվյալներ → www.caucasusbarometer.org

«Կավկասիայի հետազոտական ռեսուրսների կենտրոն» (CRRC) տարբեր կազմակերպությունների համար, որի արդյունքները հրատարակված է www.caucasusbarometer.org կայք էջում:

Կարող եք ընտրել ձեզ հետաքրքրող հետազոտությունը կամ, կարող եք, տարբեր երկրների կամ տարբեր տարիների արդյունքները համեմատել միմյանց հետ: Նախքան կայք էջի կիրառումն սկսելը դիտեք կայք էջում տեղադրած կարճ տեսահոլովակը:

## Նավեր և ինքնաթիռներ

### Վրաստանի օդանավակայաններն ու ինքնաթիռները → www.gcaa.ge

Վրաստանում ավիացիայի համար պատասխանատու պետական հաստատություն է տնտեսության նախարարությանը կից հանրային իրավունքի իրավաբանական անձ «Վրաստանի քաղաքացիական ավիացիայի գործակալությունը» (www.gcaa.ge): Գործակալության կայք էջից կարելի է.

- **Տեղեկատվություն ստանալ Վրաստանի օդանավակայանների և ուղղաթիռակայանների մասին.**
  Իջեք կայքի գլխավոր էջով և սեղմեք «Օդանավկայաններ և ուղղաթիռակայաններ» դաշտի վրա: Սեղմեք ձախում զետեղված գրառումը՝ «Վրաստանի քաղաքացիական օդանավակայաններ և ուղղաթիռակայաններ»:

Կիայտնվի քաղաքացիական օդանավակայանների և ուղղաթիռակայանների ցուցակը իրենց նույնականացման տեղեկատվությամբ և օպերատոր ընկերությունների անունների նշմամբ: Լրացուցիչ տեղեկատվություն տանալու համար սեղմեք յուրաքանչյուր օդանավակայանի վրա:

- **Տեղեկատվություն ստանալ քաղաքացիական օդանավերի ռեեստրի մասին.** Գլխավոր էջի վրա ընտրեք «ռեեստր», կիայտնվի ինքնաթիռների ցուցակը իրենց նույնականացման տեղեկատվությամբ և օպերատոր ընկերությունների անուններով:
- **Տեղեկատվություն ստանալ բեռի և ուղևորների մասին.** Մկնիկը տարեք «վիճակագրություն և ժամանակացույց» բաժանմունքի վրա և տվյալները դիտելու համար ընտրեք համապատասխան ենթաբաժինը:

## Նավերի մասին տեղեկատվություն ստանալու համար հետևել → Marinetraffic.com & Vesseltracker.com

Ինչպես Marinetraffic.com-ը, այնպես էլ Vesseltracker.com –ը հնարավորություն կտա իրազեկվել, թե որ նավերն են լողում վրացական դրոշի տակ (համենայն դեպս, իրենց տվյալների բազայում հաշվառված նավերից): Երկու կայքում էլ կտեսնեք տվյալներ ջարդոնի վերածված/դուրս գրած նավերի մասին, դրանց նկարներն ու նկարագիրը:

- Marinetraffic.com-ում 140-ից ավելի նավ է հաշվառված Վրաստանում: Տես՝ http://www.marinetraffic.com/en/ais/index/ships/all; (անգլերեն)
- Vesseltracker.com-ում100- ից քիչ ավելի քանակով նավ է հաշվառված, ընդ որում այն նավերը, որոնք այլևս չեն կիրառվում: Տես՝ :http://www.vesseltracker.com/en/VesselArchive/Georgia/All.html (անգլերեն, գերմաներեն, ռուսերեն)

**Հետևեք Բաթումիի և Փոթիի նավահանգիստների նավերին →**

Ստորև տրված առևտրական կայքերը հնարավորություն են տալիս տեղեկանալու, թե որ նավերն են այժմ գտնվում նավահանգստում, որ նավերին են սպասում, կամ որոնք են մոտենում նավահանգիստներին, և՝ որ նավերը վերջերս թողեցին Վրաստանի նավահանգիստները:

**Բաթումի →**
https://www.marinetraffic.com/en/ais/details/ports/787/Georgia_port: BATUMI
http://www.vesseltracker.com/en/Port/Batumi/Dashboard.html

**Փոթի →**
https://www.marinetraffic.com/en/ais/details/ports/786/Georgia_port: POTI
http://www.vesseltracker.com/en/Port/poti/Dashboard.html

https://www.marinetraffic.com/en/ -ը **հնարավորություն կտա օպերատիվ կերպով հետևել նավերին քարտեզի վրա: Այստեղ կարող եք տեսնել դրանց վերջին տեղափոխությունները, նավերի տվյալները, նկարները և այլն:**

**Վրաստանի նավահանգիստների կայք էջերը**
**Յուրաքանչյուր նավահանգստի կայքում որոշակի տեսքի մանրամասն տեղեկատվություն և վիճակագրություն կարող եք տեսնել Վրաստանի գլխավոր նավահանգիստների մասին:**

(Դրանց շահագործումն իրականացնում են մասնավոր ընկերությունները).

→ Բաթումի՝ http://www.batumiport.com/eng/index.php?page=show&sec=52 (անգլերեն, վրացերեն, ռուսերեն)
→ Փոթի՝ http://www.apmterminals.com/europe/poti/ (անգլերեն)
→ Քուլևիի նավթային տերմինալ՝ http://www.kulevioilterminal.com/ (անգլերեն, ռուսերեն)

## Ինչպե՞ս հետևել արտասահմանյան ընկերություններին

Այն երկրների քանակը, որոնցում իրենց սահմաններում գործող բիզնես ընկերությունների սեփականության մասին տեղեկատվությունը հանրայնորեն մատչելի է, բավականին քիչ է: Չնայած այդ բանին, գոյություն ունեն հարթակներ, որոնք հաճախորդներին հնարավորություն են տալիս ձեռք բերել որոշակի տեղեկատվություն արտասահմանյան ընկերությունների մասին:

### Հետազոտական վահանակ → www.investigativedashboard.com

Հետազոտական վահանակը միավորում է (www.investigativedashboard.com) տարբեր երկրների բիզնես ռեեստրների հղումները: Մուտք գործեք այդ կայքը, ընտրեք «Search in documents and databases» կամ՝ «Visit Recommended Global Databases»: Երկու դեպքում էլ կստանաք ընդարձակ ցուցակ, որտեղ թվարկած են տարբեր երկրների բաց աղբյուրները: Բնական է, տարբեր երկրներում գործում են թափանցիկության տարբեր չափորոշիչներ, հետևաբար, այստեղ թվարկած աղբյուրները միմյանցից տարբեր են:

Այս կայք էջն ունի ևս մեկ ֆունկցիա՝ Ask an expert. Դուք կարող եք լրացնել հայտը նշելով այն հարցը, ինչն ուսումնասիրում եք և կազմակերպության հետազոտողը կմատուցի համապատասխան տեղեկատվություն: Կազմակերպությունը Կտրամադրի անվճար ծառայություն, սակայն հնարավոր է շատ ժամանակ պահանջվի:

### Տեղեկատվություն օֆշորներից → http://offshoreleaks.icij.org

Այս տվյալների բազան պարունակում է տեղեկատվություն տարբեր օֆշորային իրավասություններում գրանցված ընկերությունների և դրանց սեփականատերերի մասին: Այդ բազայում միավորված են նաև վերջին ամիսներին հրատարակված Պանամայի փաստաթղթերը:
Գլխավոր էջի որոնման դաշտում մուտքագրեք անձի կամ ընկերության անունը և եթե անձը կամ սուբյեկտը ամրագրված է տվյալների բազայում, համակարգը կտա ցուցակ, որտեղ հաշվառված է այդ անձը:
Սեղմեք անձի կամ սուբյեկտի վրա և կստանաք այդ սուբյեկտի այլ ընկերությունների և մասնավոր անձանց հետ ունեցած կապերն արտահայտող սխեմա:
Կարղ եք, տեղեկատվություն ձեռք բերել նաև ըստ կոնկրետ երկրի, օրինակ, Վրաստանի:

**Ծանոթագրություն.**
**Տվյալների բազան չի պարունակում տեղեկատվություն բոլոր օֆշորային ընկերությունների և դրանց սեփականատերերի մասին: Եթե անձը կամ ընկերությունը բազայում ամրագրված չէ, դա չի նշանակում, որ այդ ընկերությունը**

| |
|---|
| **գոյություն չունի, կամ, որ տրված անձը օֆշորային սուբյեկտներում ընկերությունների չի տիրապետում:** |

### ԱՄՆ արժեթղթերի և բորսայի տվյալներ → www.secinfo.com

www.secinfo.com –ն ԱՄՆ արժեթղթերի և բորսայի հանձնաժողովի տվյալների բազա է, որտեղ հավաքած է պաշտոնապես գրանցված ընկերությունների կողմից ներկայացրած հաշվետվությունները: Նշված կայքի ինտերֆեյսը կիրառման համար շատ հարմար տեսք չունի, սակայն կայք էջը բավականին օգտակար տեղեկատվություն է ընդգրկում:

Օրինակ, «Միջազգային թափանցիկություն՝ Վրաստանը» այս տվյալների բազայի միջոցով տեղեկացավ, որ Ռուսաստանի հեռուստահաղորդակցական «Վիմպելկոմ» ընկերությունը Վրաստանի «Մոբիթելում» («Բիլայն») վերջերս իր մասնաբաժինն ավելացրեց 51% ից մինչև 80% :

Որոնման դաշտում գրեք ընկերության անվանումը և համակարգը ցույց կտա ընկերության կողմից ներկայացրած հաշվետվությունը: Բազան, որպես օրենք, ընդգրկում է լայնածավալ տեքստ և տվյալներ: Այդ պատճառով էլ ցանկալի տեղեկատվություն քաղելու համար բավականին ժամանակ կպահանջվի:

| |
|---|
| **Ծանոթագրություն.**<br>**Հաշվետվությունները տեսնելու համար կայքում պետք է գրանցվեք: Գրանցվելուց հետո կայքից կօգտվեք անվճար:** |

## Ինչպե՞ս իրականացնենք մեր տվյալների զննականացում

*Երաշխավորած առցանց ռեսուրսներ*

| | |
|---|---|
| Open Refine (նախկին՝ Google Refine)<br>http://openrefine.org/ | Տալիս է հեշտությամբ վերահսկվող ծավալի Excel ֆայլեր |
| Datawrapper (www.datawrapper.de) | Կազմում է ձեր բլոգներին և առցանց |

| | |
|---|---|
| | հոդվածներին կցվող ինտերակտիվ սխեմաներ: |
| Timeline JS (https://timeline.knightlab.com/) | Իրադարձությունների զարգացումը ցույց է տալիս ըստ ժամանակագրության: |
| Tableau public (http://www.tableausoftware.com/) | Կկարողանաք իրականացնել ծավալուն տվյալների կառավարում և զննականացում : |
| Picktochart (https://piktochart.com/) | Ինֆո (տեղեկատվական) գրաֆիկներ: |
| Vis.occrp.org (http://vis.occrp.org/) | Կկարողանաք իրականացնել սուբյեկտների և ընկերությունների միջև եղած կապերի զննականացում: |

## Հավելված

**Նշված ցուցակում փորձեցինք հավաքել Վրաստանի հետ կապված բաց տվյալներն՝ առցանց աղբյուրների և օգտակար տեղեկատվության համար:**

Վերջինիս կից կլինի «Միջազգային թափանցիկություն՝ Վրաստանի» կողմից հավաքած բաց տվյալների բոլոր կայքերի ցուցակը (ինչպես վրացական, այնպես էլ արտասահմանյան).
https://docs.google.com/a/transparency.ge/spreadsheet/ccc?key=0AqsbzT5Sdy6PdFVUYk96bVM2enRzNGc2c3Q4a2R5eGc&usp=drive_web#gid=0